№ 115 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26
1907
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26 № 115
ԵՐԵՍՈՒՆ-ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak"
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.
ՄՇԱԿ
ԼՐԱԳԻՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ
ԵՐԵՔ րուբլի
Մի ամսվայ համար 1 րուբլի

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Վերադառնալով կովկասեան հանքային ջրերից՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 1—3 ժ., երեկ. 6—8 ժ., Սօլոլակ, Բեհբութեան փողոց № 33:
առ. (ա. օ.)

ԵՐԴՈՒԵԱԼ-ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
ՅՈՎՍԷՓ ՂՈՐՂԱՆԵԱՆ
տեղափոխվեց Կլասսիչեսկայա փողոց, տուն № 6 (առաջին արական գիմնազիայի ետևը):
(ու. ե. հ.) առ. 3—3

ԲԺԻՇԿ
ԳՐ. ՄԱԿԱՐԵԱՆ
Վերադարձաւ և նորոգեց հիւանդների ընդունելութիւնը ներքին և երեխայոց հիւանդ. ամէն օր առ. 11—12 ժ., երեկ. 5—6 ժ.
Միքայէլեան փողոց, տ. Արամակլիսեանի № 67: առ. (կ. չ. ու.) 3—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի մասին. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Համալսարան Կովկասում. Հացի թանգութիւնը. Կովկասագիտական կուրսերից. Պետական Դումայի ընտրութիւնների մասին. Դատաստանական դահլիճից. Թատրոն և երաժշտութիւն. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից. Մատենագրութիւն. Նամակ խմբագրութեան. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Թիւրքահայկական հարցը. Պարսկաստան. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Գիւղական Նամակներ:

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կեանքը դրել է մեր առաջ հացի մատակարարութեան խնդիրը:

Ի՞նչ կարող ենք մենք անել:

Ամէն մի քաղաքում և գաւառական կենտրոնում, այլ և գիւղերում տեղական ազգաբնակութեան ներկայացուցիչները պէտք է խորհրդակցութիւններ կազմեն և քննեն հետևեալը.

—Հացը թանգանում է, և ձմեռվայ կիսին, իսկ մանաւանդ գարնանը նա լինելու է աւելի ևս թանգ: Ուրեմն միանանք բոլորս, ձեռք բերենք հաց ներկայիս համեմատաբար ձեռնտու գներով և պաշարներ ամբարենք ամբողջ ձմեռվայ համար:

Այստեղ նուէրների և մասնաւոր օժանդակութիւնների հարց չէ, այլ կազմակերպված մի գործունէութեան տեղական միջոցներով:

Մի տեղ նախաձեռնութիւն կարող են վերցնել այդ կազմակերպութեան գործում քաղաքային վարչութիւնը, միւս տեղ գիւղական ժողովը, երրորդ տեղ մասնաւոր մարդկանց խմբերը, չորրորդում առանձին անհատներ, հինգերորդում զանազան հիմնարկութիւններ, գործարաններ և այլն:

Իւրաքանչիւր տեղ կը գտնէ իրան օգնելու միջոցները: Օրինակ՝ Շուշու, Ջիբրայիլի և Զանգեզուրի գաւառները, որտեղ այժմեանից իսկ թանգացել է հացը, կարող են գուցէ օգտվել համեմատաբար էժանագին հացից, որ կայ Արաքսի միւս ափում՝ Ատրպատականի սահմանում, ուր բերքը աւելի լաւ է եղել այս տարի քան մեզանում և ազատ է արտահանութեան արգելքից:

Սա մի օրինակ է, որի նմանները կարող են լինել և ուրիշ շրջաններում, մանաւանդ որ մեր երկրի մի քանի տեղերում հունձը եղել է փոքր ի շատէ բաւարար: Նախիջևանի գաւառը, դիցուք, բաւական աջող հունձ է ունեցել իր մի մասում և կարող է մատակարարել հաց իր շրջակայ տեղերին:

Երբ տեղական մարդիկ քննութեան կառնեն խնդիրը և կը սկսեն գործնական քայլեր անել, նրանք շատ շուտով կը պարզեն և այն միջոցները, որոնցով նրանք կարող կը լինեն կազմակերպել հացի մատակարարութեան գործը:

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 25 սեպտեմբերի: Բիբի-էյբաթի նաւթահանքերի մեծ մասը նաւթ քաշելը վերսկսեց: («Հ. Գ.»)

Գանձակ: Չեղած ցուրտ է. սարերի լանջերում ձիւն է եկել: («Հ. Գ.»)

«Berliner Tageblatt» լրագրի Թէհրանի թղթակիցը հաղորդում է, որ մէջլիսի անդամների ժողովը որոշել է պահանջել Շահի հրաժարականը, որովհետև նա իր անընդունակութեան պատճառով անկարող է կառավարել երկիրը: Յատուկ պատգամաւորութիւնը արդարև պահանջել է Շահից, որպէսզի նա ընդունէ նոր կարգը և հրաժարվէ գահից: Այդ դէպքի առիթով Շահը խորհրդակցել է անգլիական դեսպանի հետ: Թղթակիցը հաւատացնում է, որ եթէ պարլամենտը ուշադրութեան չառնէր, որ Շահի յաջորդի գահակալութիւնը պէտք է ընդունվի և դեսպանների կողմից, անմիջապէս գահընկէց կանէր:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Շուշի, 25 սեպտեմբերի: Կայացաւ Շուշու, Ջիվանշիրի, Կարեագինի գաւառների քաղաքային ընտրողների համագումարը՝ մի պատուիրակ ընտրելու համար: Դաշնակցականները բոյկոտ էին արել: Հայ և թուրք ընտրողների ձայների ճնշող մեծամասնութեամբ ընտրվեց Համբարձում Առաքելեանը:

Քութայիս, 25 սեպտեմբերի: Քաղաքային ընտրութիւններին յաղթութիւնը տարան սօցիալ-դեմօկրատները: Ձայների բացարձակ առաւելութեամբ ընտրվեցին ուսուցիչ Րօբակիձէն, գիւղատնտես Վազաձէն և բժիշկ Նասարաձէն:

Փօթի: Նիկօլաձէ և Մէունարգի ընտրվեցին պատուիրակներ ձայների ճնշող մեծամասնութեամբ: Սօցիալ-դեմօկրատների թեկնածուները սևացան:

Գօրի: Պատուիրակներ ընտրվեցին 7 սօցիալ-դեմօկրատներ:

Դուշէթ: Հողատէրերի կողմից նահանգական պատուիրակներ ընտրվեցին հինգ ձախակողմեաններ և մէկ անկուսակցական:

Այսօր Զուբալօվի ժողովրդական տան մէջ կայանալու է ռուս ընտրողների ժողովը:

Սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը քաղաքումս իբրև պատուիրակների առաջադրել է հետևեալ անձնաւորութիւններին.

I ընտրողական բաժնում. 1) Գելէյշվիլի Պեօտր Պաւլովիչ, քաղաքացի, ըստ ընտրողական ցուցակի № 1626. 2) Չխէիձէ Նիկօլայ Սեմեօնօվիչ, քաղաքացի, ըստ ընտրողական ցուցակի № 2950:

II-րդ ընտրողական բաժնում. 1) Գօգուա Կալիստրատ Գիգօեվիչ, քաղաքացի, ըստ ընտրողական ցուցակի № 2179. 2) Ռամիշվիլի Նօյ Վիսարիօնօվիչ, քաղաքացի, ըստ ընտրողական ցուցակի № 358. 3) Կօնդախչեվ Արտէմ Իվանօվիչ, քաղաքացի, ըստ ընտրողական ցուցակի № 1025.

III-րդ ընտրողական բաժնում. 1) Նէյման-զադէ Ֆայկ էֆէնդի, քաղաքացի, ըստ ընտրողական ցուցակի № 2421. 2) Բազմաձէ Նիկօլայ Նիկօլաեվիչ, քաղաքացի, ըստ ընտր. ցուցակի № 686. 3) Եազուբեանց Լևոն Բաղդասարեան, քաղաքացի, ըստ ընտրողական ցուցակի № 2435:

Սեպտեմբերի 22-ին Բագուի ընտրողական ցուցակները կազմող բիւրօյի մէջ սկանդալ է տեղի ունեցել: Ամբողջ օրը, «Бак. Эхо»-ի ասելով, վարչութեան մէջ հաւաքված ընտրողները աղմուկ էին բարձրացրել, որովհետև ոստիկանութիւնը ծրարները չէր յանձնել նրանց: Բիւրօն, ընտրողների անձնաւորութիւնները ստուգելուց յետոյ, անմիջապէս յանձնել է ծրարները սեփականատէրերին: Այդ ծրարների վրա ոստիկանութիւնը նկատողութիւն է եղել արած, որ չեն գտել տէրերին: Սակայն, ընտրողների մեծամասնութիւնը յայտնեց, որ նրանք հէնց ապրում են այն տներում, որի անունով գրված է հասցէն ծրարների վրա: Ի միջի այլոց նոյն հասցէով են ստանում թէ թղթակցութիւնները և թէ նոյն իսկ ոստիկանութեան միջոցով ուղարկվող հրաւիրաթերթերը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հին յոյները պատմում էին, որ Պրոմեթէոս՝ գողանալով երկնքից կրակ՝ ճաշակել տուեց մարդկային ցեղին այդ սքանչելի երկնային պտուղը, ուստի և աստուածները ի պատիժ այդ յանցանքի շղթայեցին նրան Կովկասի ապառաժին: Սակայն այդ աստուածային հուրը, տարածվելով հողագնդի վրա ծայրից ծայր, մեր երկրում դարերի ընթացքում սմբակակոխ եղաւ բարբարոս ազգերից և հալածվեց արիւնածարաւ ինքնակալներից: Նա ապաւինեց վանքերի պարիսպներում՝ շնորհ և գիտութիւն ներշնչելով աշխարհից հեռացած մենականներին: Եւ Պրոմեթէոսի գողացած կրակը՝ անցնելով ազգէ ազգ և երկրէ երկիր՝—Բաբելոն, Յունաստան, Հռոմ, Եւրոպա, սկսեց այրել փիլիսոփաների և գիտնականների միտքը, աճելով ու զարգանալով իր բոլբոջման մէջ: Եւ նա երբ նոր դարերում շողաց Եւրոպայի երկնակամարի վրա իր սքանչելի լուսով, նրա կենդանարար ճառագայթները, ճեղքելով անհուն տարածութիւնը, փայլեցին վերջապէս և մեր երկրում, նոր կեանքի, նոր գործունէութեան հրաւիրելով հայ ազգը և նրա հարևան եղբայրներին: Եւ այնուհետև գիտութեան ծարաւի մեր երիտասարդները, թողնելով հայրենիք, սկսեցին հեղեղել Ռուսաստանի և արտասահմանի համալսարանները, նրանց մէջ որոնելով յորդառատ աղբիւր իրանց և իրանց ազգի մտաւոր բարգաւաճման համար: Ժամանակը ցոյց տուեց, որ գիտութեան հուրը, բարձրացնելով մարդուս իր անցեալի վրա, կատարելագործելով նրան և բաց անելով նրա առջև բնութեան թագուն գաղտնիքները, յիրաւի միակ զէնքն է հանդիսանում առաջադիմելու համար:

Համալսարա՜ն... Այս հաստատութեան մէջ մարմնացել է մարդկային ցեղի վեհագոյն զարգացումը, որով նա լրացնում է իր կուլտուրական պատմութեան ճանապարհը իր հրաշալի գիւտերով: Կա՞յ լուսաւոր ազգ, որ չունենայ իր համալսարանը, որի մէջ նա տեսնում է իր փառքը և իր ապագայի անխախտ գրաւականը. այդ սրբութեան տաճարի մէջ մկրտվում են նրա զաւակները, որոնք կոչված են բուժելու ժողովրդի վէրքերը, նրան առողջ գաղափար ներշնչելու՝ մարդուս կոչման, իրաւունքի և պարտականութեանց մասին, ուսուցանելու նրան շահագործել բնութեան բարիքները, փարատելու նրա մտքի խաւարը գիտութիւնների անսպառ լուսով:

Ահա թէ ինչու Կովկասի մտաւոր և նիւթական բարգաւաճումը ոչ միայն չէ առաջադիմում, այլ և հետզհետէ քայքայվում է. նա չունի այն կարևոր ղեկը, որ առաջնորդում է ազգերն, չունի այն գիտութեանց տաճարը, որ կենսատու լոյս է սփռում իր շուրջը: Զարմանալի չէ յիրաւի, որ մեր բազմամարդ երկիրը չունի քսաներորդ դարում ոչ մի համալսարան, և մեր երիտասարդները ստիպված են մեծ նիւթական նեղութիւնների մէջ օտար, շատ անգամ անհիւրասէր երկիրներում, նախ ամիսներ և ապա տարիներ կորցնելով անծանօթ լեզուների հետ ծանօթանալու համար, ձեռք բերել գիտութիւններ:

Բազմարուեստանոցի (политехникумъ) Կովկասում բացման խնդիրը ըստ երևոյթին լուծվում է, և ապագայում բացվելու են բնագիտական ու իրաւաբանական բաժինները, որոնք անկասկած օգտաւէտ են մեր երկրի համար: Սակայն մեզ՝ հայերիս և մեր հարևան ազգերի համար անհրաժեշտ է սկսել նախ մտաւոր կրթութիւնից. փիլիսոփայական, պատմական, աստուածաբանական լեզուագիտական բաժինը պէտք է լուսաւորութեան մայր համարել, որը մեզ կը շնորհէ առողջ աշխարհահայեցողութիւն, կը ծանօթացնէ մեզ մեր կուլտուրական և քաղաքական անցեալի հետ, որի հետ կապված է մեր ներկան, կը քայքայէ մեր նոյն իսկ հեթանոս դարերից մնացած կրօնական անմիտ նախապաշարումների հիմքերը՝ նոր միտք, նոր ոգի մտցնելով մեր եկեղեցու մէջ, կը պարզէ Կովկասի և Անդրկովկասի լեզուների ծագումը և նրանց ազգակից կապերը այլ մեծ ազգերի լեզուների հետ: Այն, ինչ որ մենք պէտք է անէինք, արել են եւրոպացիք՝ Կովկասի ազգերի պատմութեան, գրականութեան և լեզուների վերաբերմամբ. մենք նրանցից ենք սովորում, փոխանակ նրանք մեզանից սովորելու:

Հասարակութեան լուրջ վերաբերմունքը դէպի նորերս Թիֆլիսում բացված բարձր կուրսերը ապացուցեց, որ յիրաւի աճել-հասել է համալսարանի՝ իր չորս բաժիններով հանդերձ՝ բացման խնդիրը Կովկասում. անխորհուրդ կը լինէր այլևս ձգձգել այդ խնդրի իրագործումը, քանի որ ինքը ժամանակը պահանջ է դնում նոր սերնդի առաջ յանուն երկրի մտաւոր և նիւթական բարգաւաճման՝ դիմելու այդ վեհ զէնքին:

Բագրատ Խալաթեան

Թիֆլիս, 24 սեպտեմբերի

ՀԱՑԻ ԹԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Գանձակ, սեպտեմբերի 21-ին

Հացահատիկի գինը օրից օր զգալի կերպով բարձրանում է, և իւրաքանչիւր օր հեռագիրները գուժում են Ռուսաստանում գները բարձրանալու մասին: Ամենապարտաճանաչ շոգէաղացի տէրերն՝ անգամ հրաժարվում են ամիսներ առաջ վերցրած պատուէրները կատարել և ստացած կանխադրամները վերադարձնելով՝ հրաժարվում են նոյնիսկ ներկայ բարձր գներով պատուէրներ կատարելու:

Բագուից յայտնի «Սկօբօլեվ» շոգէաղացի տէրը Բագուից դուրս օտար քաղաքների համար ոչ բարձր և ոչ միջակ տեսակի ալիւր չէ ուզում ծախել, պատճառաբանելով որ իր պատրաստած ալիւրները հազիւ բաւականութիւն կարող են տալ տեղական գնողներին:

Ռուսաստանի մի քանի ֆիրմաների ներկայացուցիչները հրահանգ են ստացել պատուէրներ կամ առայժմս չընդունել կամ ընդունել զգուշութեամբ:

Մենք դիմեցինք մի քանի յայտնի ֆիրմաների՝ հացի յանկարծ թանգանալու իսկական պատճառն իմանալու, սակայն նրանց հակասական պատասխաններից ոչ մէկը իսկական հիմք չէ կարող լինել: Մէկն ասում է՝ թանգանալու գլխաւոր շարժառիթը արտասահման մեծ քանակութեամբ հաց արտահանելն է. երկրորդն ասում է, որ անցեալ երկու տարիներում Ռուսաստանի շատ հացառատ հողերում չեն ցանել, երկիւղ կրելով ժողովրդական անկարգութիւններից... Երրորդն ասում է, որ բոլոր հացավաճառ մեծ ֆիրմաները դաշն են կապել մի գնով ծախելու հացը:

Այս պատճառաբանողներից ոչ մէկը չէ պարզում հացահատիկի գները հսկայական բարձրանալու շարժառիթները, բայց սա մեզ համար պարզ է, որ Թիւրքիայից թիւրքաց կառավարութիւնը արգելել է հացի արտահանումը արտասահման, իսկ ներմուծելու համար վերցրել է պետական հացի վրա դրած մաքսը:

Ի՞նչ ասել կուզէ, որ հացի թանգութիւնը ազդել է նաև քաղաքիս հրապարակի գների վրա. գները ոչ թէ աւելացրին, այլ և դադարեցրին առաջվայ չափով հացահատիկ բերել Գանձակի հրապարակը ծախելու համար:

Ինչպէս յայտնի է, գաւառիս շատ մասերում, թուրք-հայկական աղէտների պատճառով, անկարող եղան նախանցեալ և անցեալ տարիները վար ու ցանք անել, և գիւղացիները վերջին երեք տարում ստիպված են իրանց տան արժէքաւոր իրերը ծախել և հաց գնել. այժմ նրանք սոսկում են, երբ լսում են ներկայ սարսափելի գները:

Հացի գինը թանգ չէ միայն մի շանտաժիստ ընկերութեան համար, որի գործունէութեան կենտրոնը Օդեսսան է, և նա, օգտվելով Ռուսաստանում տպված հսկայ հասցէագրքից, իւրաքանչիւր օր հարիւրաւոր նամակներ և պրէյս-կուրանտներ է ուղարկում և ալիւրի գներ է առաջարկում:

Այդ խաբեբայ ընկերութիւնը, որ «Փոխադարձ օգնութեան ընկերութիւն» անունով է գործում, անցեալներում շատ կովկասցիների է խաբել, և շատերն են նրա ուռկանն ընկել: Բայց և այնպէս, կան դեռ շատ միամիտներ, որոնք, խաբվելով նրա մեծահնչիւն խոստումներից, ընկնում են այդ խարդախի ուռկանը:

Աւ. Սահ.

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻՑ

Գ. Ստ. Մալխասեանի երրորդ դասախօսութեան (սեպտեմբերի 21-ին) նիւթն էր՝ հայոց տառերը, սրանց ծագումը և այլ ալֆաբէտների ազդեցութեան որոշումը հայկականի վրա: Յայտնի է, որ մեսրոպեան այբուբենը բաղկացած էր 36 տառից, որոնց վրա XI-րդ կամ XII-րդ դարերում աւելացան երկուսը (օ. ֆ.):

Մեսրոպի հնարած տառերը երկաթագիր էին, ինչպէս վկայում է Զուարթնոց եկեղեցու արեգակնային ժամացոյցի վրա մնացած գեղեցիկ արձանագրութիւնը, VII-րդ դարի առաջին կէսի ժամանակից: Խօսելով այլ այբուբենների ազդեցութեան մասին, դասախօսը հէնց սկզբից մի կողմ թողեց վրաց այբուբենը, որ կարող է ծագած լինել հայկականից, և ոչ հակառակը, և առաջարկեց ղեկավարվել հետևեալ դրութիւնով. չը յափշտակվել զանազան ալֆաբէտների տառերի արտաքին նմանողութեամբ, եթէ այդ տառերը միայն արտաքինով են նման, առանց հնչիւնների համապատասխան լինելուն, կամ եթէ և՛ տառերը, և՛ հնչիւնները համանիշ են, բայց պատահաբար միայն մի երկու տառով: Մենք բաց ենք թողնում դասախօսի այս կէտի վրա լուսաբանութիւնները, որ պահանջում են նկարներ: Այլ պէտք է ունենալ ճշգրիտ պատմական վկայութիւններ՝ թէ մէկ այբուբէն կամ մի ազգ ունեցել է ազդեցութիւն միւս այբուբէնի կամ ժողովրդի վրա, նոյնպէս եթէ որևէ այբուբէնի կազմուածքը, դասաւորութիւնը բացատրվում է միւսով: Այս դրութիւնը առաջնորդ ունենալով՝ կարելի է խօսել պարսկականի, ասորականի և յունականի ազդեցութիւնների մասին: Հայ գրի ծագումը այս երեք ազգութիւնների տառերից ունի իր հետևողները և՛ մեր, և՛ եւրոպացի գիտնականների շարքում: Դասախօսը քննելով առաջին երկու ուղղութիւնների ապացոյցները՝ հերքում էր նրանց և ամբողջովին յարում է, երրորդի այսինքն հայերէնի՝ յունարէնից ծագման կողմնակիցներին: Դա կարելի է ընդունել, հիմնվելով և՛ պատմական փաստերի վրա, և՛ երկու ալֆաբէտների տառերի նմանութեան ու հնչիւնների համապատասխանութեան և նրանց միատեսակ դասաւորութեան վրա: (Ի հարկէ դասախօսը վերցնում է V դարի գիրը և նոյն շրջանի յունականը՝ գլխագիր և նօտր): Անալիզը ցոյց է տալիս, որ յունական ըսկզբնական 22 տառերից Մեսրոպը և Հռոփանոսը վերցրել են հայերէնի համար 10 տառ անպայման, 4-ը՝ քիչ-շատ հաւանական: Որտեղից են վերցված մնացած հայ տառերը—դա սակաւ կարեւոր խնդիր է և կարելի է անել զանազան ենթադրութիւններ:

Ինչ վերաբերում է տառերի սկզբնական արտասանութեան (գիմ. դա, եչ և այլն), այստեղ պարզ երեւում է ասորականի ազդեցութիւնը, որ բացատրվում է Մեսրոպի մէջ անշուշտ արմատացած սովորութեամբ՝ ասորական արտասանութեան հետ:

Ցոյն և հայ տառերի համեմատութիւնը առաջացնում է մի շարք հետաքրքիր հարցեր հայկական հնչիւնների մասին, տառերի սկզբնական արտասանութեան մասին: Թող ընթերցողը յիշէ մի շատ տաք վիճաբանութիւն, որ տեղի ունէր ռուսահայերի և արեւելցիների մէջ «դ. կ. տ. դ.» և այլն տառերի գործածութեան վերաբերեալ՝ համապատասխան լատինական հնչիւնները փոխադրելիս. գրել Լօնտօն թէ Լօնդօն, Գամբետտա թէ Կամպեդդա և այլն: Դասախօսը յայտնեց, թէ կը նուիրի մի ամբողջ դաս «ւ» տառին, ի նկատի ունենալով տառիս նշանակութիւնը հայկական ներկայ ուղղագրութեան մէջ, և կանգ առաւ «ղ» տառի սկզբնական արտասանութեան վրա: Մատնանիշ անելով Արսէն Բագրատունու և Գաբ. Այվազեանի այդ հարցի մասին պօլեմիկայի վրա, դասախօսը միանգամայն համոզված է, որ «ղ» սկզբում ունէր յունական «լամպդայի» «լ» հնչիւնը, որ համապատասխանում է եւրօպական լեզուների կակուղ «լ»-ին: Եւ յունական, և հայկական տառերի դասաւորութիւնն է դա հաստատում, և ակնյայտնի է շատ հայ բառերի արտասանութիւնից (օր. աղ—անալի, աքաղաղ—աքլար, մառախուղ—մառախլապատ, Թող—Թոյլ (և այլն): Միայն սկզբնական «ղ»-ի հնչիւնը այնքան շուտ անհետացել է հայերիս մէջ, որ արդէն XII դարի հայ քերականները սխալ կարծում էին, թէ «ղ»-ն ունեցել է երկու նշանակութիւն՝ այժմեանի և կակուղ «լ»-ի:

Իբրև անալօգիա ցոյց տուեց, որ հրէաները բոլոր «Ղ»-երը արտասանում են ինչպէս «ղ», նոյնպէս և Ֆրանսիայի և Գերմանիայի շատ տեղերում նկատվում է նոյն հնչիւնական երեւոյթը:

Հետեւեալ դասախօսութիւնը՝ «հայոց լեզուի ծագումը և բնած տեղը հնդիկ-եւրօպական լեզուների շարքում»՝ լինելու է ուրբաթ, սեպտեմբերի 28-ին: Պ. Զ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

◆ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Մոսկվայի քաղաքային կոմիտէտը, «Р. В.»-ի ասելով, ի նկատի առնելով Ն. Վ. Տեսլենկոյի և Ա. Ա. Կիզեվետտերի հրաժարվելը Պետական Դումայի անդամի թեկնածութիւնից, որոշել է առաջարկել Ֆ. Ա. Գոլովինի թեկնածութիւնը: Որովհետև Գոլովինը մտցված չէ եղել ցուցակի մէջ, ուստի անձամբ նա բողոքել է քաղաքային վարչութեան: Այժմ քաղաքային վարչութեան ստատիստիքական բաժանմունքը անհրաժեշտ է համարել ուղղել իր սխալը և Գոլովինին մտցնել ցուցակի մէջ:

◆ Մայրաքաղաքի թերթերը մի քանի օր սրանից առաջ հաղորդում էին, որ Մոսկվայում առաջիկայ ընտրութիւնների համար ձախակողմեան կուսակցութիւնները բլոկ են կազմել: «Утро Россіи» լրագիրը այժմ յայտնում է, որ այդ լուրը անհիմն է. բլոկ չէ կայացել, որովհետև սօցիալ-դեմօկրատները վճռականապէս հրաժարվել են բլոկ կազմել: Չեն համաձայնվել բլոկ կազմել ժողովրդական-սօցիալիստները ևս, բայց վճռել են ընտրութիւնների ժամանակ պաշտպանել սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան թեկնածուներին: Սօցիալիստ-յեղափոխականները, ինչպէս յայտնի է, բօյկօտ են յայտարարել Դումայի ընտրութիւններին: Կադետների կուսակցութիւնը հրաժարվել է բլոկից և մասնակցելու է ընտրութիւններին անկախ:

◆ Երկրորդ Պետական Դումայի նախագահ Գոլովինը ներկայ ընտրութիւնների ժամանակ էլ դնում է իր թեկնածութիւնը Մոսկվայի նահանգի Բրօնիցկի գաւառում: Այդ առիթով «Часъ» լրագիրը նկատում է, որ Արեւմուտքում՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլն մի գեղեցիկ պարլամենտական սովորութիւն կայ, որի համաձայն վերջին պարլամենտի նախագահի թեկնածութեան դէմ մրցութիւն չէ լինում միւս կուսակցութիւնների կողմից: Արդ՝ շատ հետաքրքիր է, թէ Գոլովինի թեկնածութեան հակառակորդ աջակողմեաններն ու հոկտեմբերեանները կը հետեւե՞ն այդ գեղեցիկ սովորութեանը թէ ոչ: Դա կը լինի մի փոքրիկ քննութիւն կուլտուրական պարլամենտարների աստիճան ստանալու համար:

◆ Սօցիալ-դեմօկրատական աչքի ընկնող լիդերներից մէկը՝ Մարտօվ, «К. М.» լրագրի ասելով, մի նամակ է ուղղել կուսակցական կազմակերպութիւններին: Քննադատելով համառուսական համաժողովի որոշումը՝ սահմանադիր - ռամկավարների հետ վերընտրութիւնների ժամանակ համաձայնութիւն կայացնելու մասին, Մարտօվը ասում է, որ սօց.-դեմօկրատները այն դէպքերում, երբ պարզվի, որ անհնարին է սեփական ոյժերով իրանց ցանկացած մարդկանց ընտրել, նպատակ են դնում սև-հարիւրեակայինների ընտրութեանը նպաստել:

◆ Լեհական պրօգրեսիվ-դեմօկրատական կուսակցութեան կօմիտետը որոշել է հրաժարվել ընտրութիւններին մասնակցելուց՝ ազատութիւն վերապահելով իր գաւառական խմբակներին վարվել տեղական պայմանների համաձայն: Հրաժարվելը պատճառաբանվում է նրանով, որ կուսակցութիւնը ներկայ ընտրողական օրէնքի շնորհիւ անկարելի է համարում կռիւ մղել ժողովրդական դեմօկրատիայի հետ:

«Պրօգրեսիվ - դեմօկրատիան,—ասված է ի միջի այլոց նրանց բաց թողած թռուցիկում,—ինչպէս և ամեն մի անկեղծ դեմօկրատիա, պէտք է սպասէ իր ժամանակին, որը ընդարձակ ազդեցութիւն կը տայ նրան հասարակութեան զարգացման և բաղդի համար: Այդ ժամանակին նա պէտք է նախապատրաստվի տարածելով քաղաքական գիտակցութիւն մասսաների մէջ և դեմօկրատացնելով հասարակութիւնը կուլտուրական ինտենսիվ աշխատանքով, որը կարող լինէր ստեղծել նոր հող հասարակութեան կեանքի համար և նրա յարաբերութիւններին տար մի նոր ձև: Լեհական պատգամաւորների ներկայութիւնը Դումայում քաղաքացիական պարտականութիւններից մէկն էր միայն, իսկ ահագին մասը մնում է բուն երկրի մէջ, որը աւելի շատ կը ստանայ եթէ ինքը աշխատի, քան եթէ առնի»:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Ազատագրական շարժումը, որ ընդգրկեց 1905 և 1906 թ. թ. սկիզբներում Կովկասը, երեւան եկաւ և Սուխում քաղաքի ու նրա վիճակի սահմաններում, որով այդտեղ մղվում էր աւելի եռանդուն և բացարձակ պրօպագանդա՝ կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող պետական կազմը տապալելու համար: Առաջնակարգ տեղ Սուխումում գրաւեց այսպէս կոչված «Ռուսաց սօցիալ-դեմօկրատական բանուորական կուսակցութեան Բաթումի կօմիտէտի Սուխումի խմբակ» կազմակերպութիւնը: Այս կազմակերպութեան ազատ գործողութիւններից մէկն էլ այն է, որ բօյկօտ էր հրատարակել Սուխումի քաղաքային ինքնավարութեան դէմ: Այդ բօյկօտի նպատակն էր քաղաքային գործերի գլուխ նշանակել ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնատուութեան սկզբունքներով ընտրված անձանց:

Այս գործը մեղադրական ակտի հետ ուղարկված է Թիֆլիսի դատաստանական պալատին: Մեղադրվում են 23 հոգի զանազան ազգութիւններից: Բոլորին մեղադրանքը ներկայացրած է 126-րդ յօդուածով, որ ասում է՝ թէ նրանք մասնակցել են մի համախմբակցութեան, որը կանխամտածված կերպով նպատակ ունէր տապալել ներկայումս գոյութիւն ունեցող պետական կազմը, որով նրանք, իբրև այդ համախմբակցութեան անդամներ, ակտիվ կերպով երեւան են հանել իրանց գործունէութիւնը:

—

1906 թ. ապրիլի 6-ին, ինչպէս գիտեն մեր ընթերցողները, «Փոխադարձ գիւղատնտեսական վարկի Թիֆլիսի ընկերութիւնից», որ գտնվում է Դվորցօվայա փողոցում, յափշտակվեց 6000 րուբլի և սպանվեց ընկերութեան վերատեսուչ գնդապետ Գանգիէլին: Այս գործը այժմ արդէն պէտք է քննվի Թիֆլիսի նահանգական դատարանում:

Իբրև մեղադրվողներ դատարանին են յանձնված Գէօրգի Սօլոմօնով, Զալրօվ, քահանայի որդի Ալէքսանդր Տիմոֆէեվ Օրոլաձէ և Վլադիմիր Ասխարաձէ: Առաջին երկուսը գտնվում են ոստիկանութեան հսկողութեան տակ, իսկ վերջինը փախել է ու անհետացել:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Թիֆլիսի հայկական բեմի ներկայացումները սկսվեցին:

Առաջին ներկայացումը տեղի ունեցաւ երկուշաբթի, սեպտեմբերի 24-ին:

Ցաւալի է արձանագրել, որ հասարակութիւնը ցոյց չը տուեց դէպի բեմը բաւականաչափ ուշադրութիւն և միայն կիսով չափ լցրեց թատրօնական դահլիճը: Եթէ ինքը հասարակութիւնը չը պահէ թատրօնը, ո՞վ պէտք է հոգայ նրա մասին, մանաւանդ ներկայ թատրօնական տարեշրջանում, երբ յօյսեր չը կան մասնաւոր օժանդակութիւնների վրա: Միթէ շաբաթը մի անգամ տրվող հայկական ներկայացումներն էլ չը պէտք է գրաւեն բաւականաչափ հանդիսականներ դէպի հայկական թատրօնը: Անցեալ տարի հայ դրամատիկական ընկերութիւնը վնաս կրեց ներկայացումներից, և նրա բացը ծածկվեց կողմնակի նպաստներով: Եթէ հայ հասարակութեան համար թանգ է մայրենի բեմի գոյութիւնը և զարգացումը, պէտք է իր կողմից նպաստէ դրամատիկական ընկերութեան գործողներին աւելի ջերմ վերաբերմունքով դէպի ընդհանուր գործը:

Սեպտեմբերի 24-ին ներկայացվեցին երկու պիէս՝ Ա. Ահարոնեանի «Արցունքի հովիտը» դրաման և Տէր-Գրիգորեանի «Էս էլ քի մօզիքլութին» վօդէվիլը: Առաջին պիէսը դրվել էր և անցեալ տարի և մենք նրա մասին արդէն խօսել ենք: Այժմ նա ենթարկվել է մի քանի աննշան փոփոխութիւնների:

Դերակատարների մասին կարող ենք յայտնել հետեւեալը.

Տիկին Մայսուրեան, որ կատարում էր Հիւրիի դերը, վերաբերվել էր ուշադիր կերպով իր ներկայացրած տիպին և մի քանի տեսարաններում տուեց հոգեկան յուզմունքի ուժեղ և ցնցող արտայայտութիւններ, օրինակ՝ չորրորդ գործողութեան մէջ: Դերասանուհին զգալի առաջադիմութիւն է արել հայերէնի արտասանութեան մէջ: Համեմատաբար նա թոյլ էր առաջին գործողութեան մէջ, որտեղ նա խօսում էր ցածր և առանց ուժեղ ներշնչման:

Տիկին Արաքս Նազէի դերում ներկայացրեց միայն մի մասը այն բնաւորութեան, որ յատուկ է Նազէին: Այն բողոքը, որ դրված է Նազէի տիպի մէջ, պահանջում է աւելի գունաւոր և ուժեղ արտայայտութիւն: Տիկին Արաքս արտասանում է նախադասութիւնները խելացի և որոշ:

Տիկին Զամուկեան առաջին անգամ է հանդէս գալիս մեծ բեմի վրա: Նա անցեալ տարիները սովորում էր օրիորդ Դօլուխանեանի «Դրամատիկական կուրսերում»: Նա գործում է արդէն փորձված դերասանուհու տպաւորութիւն: Գիտէ մտնել դերի մէջ, ապրել բեմի կեանքով, բայց դեռ չէ կարողանում հաւատարիմ մնալ տիպին սկզբից մինչև վերջ և դժուարանում է իր ձեռքերին տալ համապատասխան շարժումներ:

Տիկին Նօնիկեան գեղեցիկ կատարեց Շողիկի դերը և տուեց նրան մանկական, սրտագրաւ բնաւորութիւն:

Տիկին Մելիքեան Ջէննիի դերում բաւարար էր. մեր կարծիքով նա անցեալ տարի աւելի լաւ էր ներկայացնում այդ տիպը, քան այս տարի:

Յարութիւնեան Ասլանի դերում նիւթ չունէր խաղի համար, ուստի իր ուշադրութիւնը դարձրել էր խօսքերի վրա և մի երկու տեղ ուժեղ արտայայտած իր ճառերով հաւանութիւն և բուռն ծափահարութիւն կորզեց հանդիսականներից: Յարութիւնեան գիտէ արտասանել բարձր ձայնով, երբ ցանկանում է, բայց նա պէտք է անտեսէ իր ձայնը, որպէսզի չը հասնէ այն սահմանին, երբ ձայնը սկսում է խզվել և կտրվել. առանց չափազանց բարձրացնելու էլ ձայնը ուժեղ է: Յարութիւնեան ունէր հետաքրքրական գրիմ:

Վրոյր ռէս Մնօյի դերում նորութիւն էր ներկայ սեզօնում: Նա գիտէ տալ դերին կենցաղագիտական բնաւորութիւն և ներկայացնել կեանքի մարդուն. նա դուրս էր բերել այդ տիպը կենդանի գծերով, բայց դեռ անհարթութիւններով:

Զարիֆեան և Մամիկոնեան Բարզէնի և Սուրէնի դերերում բաւարար էին:

Ցաւելով պէտք է նկատենք, որ դերասաններից մի քանիսը արտասանում էին իրանց դերերը երգելով և յիշեցնում էին այն ժամանակները, երբ յարգի էին հին դպրոցի լալկան դերասանները, որոնք հանդէս էին գալիս «Շուշան դու Շուշան» ողբերգական մենախօսութիւններով:

«Էս էլ քի մօզիքլութին» վօդէվիլում Յարութիւնեան, Մելիքեան, Տէր-Դաւթեան, Թորոսեան և Մամիկոնեան աշխուժով կատարեցին իրանց դերերը և զուարճութիւն պատճառեցին հասարակութեան:

II

Այսօր սկսվում են Թիֆլիսում դերասանուհի Լ. Եավօրսկու կազմակերպած դրամատիկական խմբի ներկայացումները, որոնք պէտք է շարունակվեն ամբողջ ձմեռային սեզօնում:

Ներկայացումները կը սկսվեն կոմս Լև Տօլստօյի նշանաւոր «Խաւարի իշխանութիւն» պիէսով:

Կարեւոր է նկատել, որ այդ պիէսը, բացի իր բնական արժանաւորութիւնից, դրվում է իր հռչակաւոր հեղինակի գրական գործունէութեան 55-ամեայ յօբելեանի օրը:

Թիֆլիսի հասարակութեան համար առիթ է ներկայանում թէ տեսնելու այդ պիէսը, որ իր ժամանակը մեծ աղմուկ հանեց ոչ միայն Ռուսաստանում, այլ և արտասահմանում, և թէ յարգելու փիլիսօփայ-բել-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

III

Ո՞վ չէ իմանում, որ այսօր գիւղական ամենախոր ու ամենաժահրակալ ցաւերից մէկը՝ գիւղական ստորին պաշտօնեաներն են: Ո՞վ չէ իմանում, որ մեզանում ընտրողական ազատ իրաւունքը ի չարն է գործ դրվում: Ո՞վ չը գիտէ, որ մեզանում հասարակական շահերի կամ արժանաւորութեան տեսակէտից չեն ընտրվում մեր գիւղական ստորին պաշտօնեաները: Վերջապէս ո՞վ չէ իմանում, որ այդ անխիղճ, բարբարոս ու անկիրթ թզուկ տիրանները, իրանց «կլասիք» զեղծումներով, կաշառակերութիւններով, անզուսպ կամայականութիւններով ու վաշխառուական նենգ ու քծնող բնաւորութեամբ հռչակ են ստացել: Այո, այդ անգրագէտ (կամ ամենաշատը՝ կիսագրագէտ) տզրուկ պաշտօնեաները, որոնք, ինչպէս ասում են, 2 իչի գարի բաժանել չեն իմանում, այսօր բազմատանջ ու շնչասպառ դարձած գիւղական աշխատաւոր բնակչութեան իրաւական ու տնտեսական ղեկը իրանց ձեռքն են կենտրոնացրել և իրանց վանդալական ոտնձգութիւններով ու անսիրտ զեղծումներով սկսել են անվերջ շահագործել նրանց թուլութիւնն ու տգիտութիւնը:

Գիւղական աշխատաւոր դասակարգը այսօր պետական պաշտօնեաներից այն աստիճան չէ վախենում, որքան գիւղի «հոգեառ հրեշտակ» դարձած տանուտէրներից, սուդիաներից, թօվչիքեարներից, տզրուկ աղաներից և այլն: Չէ վախենում պետական պաշտօնեաներից (դիցուք գաւառապետներից, պրիստաւից, ուրեադնիկից, ձիաւորներից և այլն), որովհետև այսպէս թէ այնպէս՝ երբեմն որոշ իրաւական օրէնքների են ենթարկվում. իսկ գիւղական «անսասան» դատաւորները, այդ հասարակական «բարբարոս աւազակները», ոչ խիղճ ունեն, ոչ գութ, ոչ օրէնք, ոչ մարդկութիւն: Նրանց օրէնքն էլ, գութն էլ, արդարութիւնն էլ նախ՝ հռչակաւոր «կաշառքն» է և յետոյ «պլետ ու հրացանի կոթը»: Ո՞վ կը համարձակվի նրանց «ամենակարող կամքին» հակառակ գնալ, ո՞վ սիրտ կանի գիւղական այդ «թզուկ դեսպոտի էշին չու ասել»… Բաւական է, որ տանուտէրի և իր միւս ընկեր պաշտօնեաների հրամանը մի փոքր ուշացրիր, էլ հօ հացդ կերար: Քաշ են տալիս փողոցը, և տուր որ կրտաս… Մինչև որ չօուշների թևերը չը թմրի, մինչև որ «ահեղ» տանուտէրի պլէտը գլխին մի օյին չը գայ, վերջապէս մինչև որ անբաղդ յանցաւորը արիւնլուիկ չը դառնայ, ամբողջ մարմինը չը կապտի կամ ուշաթափ չը լինի, բաց թողնելու ճար չը կայ… Ո՞վ կը համարձակվի այդ բօպէին կատաղած տանուտէրի հրէշային բարկութիւնից ազատել թշուառ ծեծվածին: Հաւատո՞ւմ է ընթերցողը, որ բազմաթիւ օրինակներ կարելի է հանդէս բերել, որ դագանակների ու պլէտների վայրենի հարուածների տակ մեռցրել են խեղճ մարդկերանց… Այո, ինչե՜ր չեն կատարվում հայ գիւղական «պուճախներում»: Հաստատգլուխ քեօխվաները գիւղի սևլուկ ու բռունցքապետ աւազակ հայրերի հետ «մէկ դռան շուն» դարձած՝ ինչե՜ր չեն նիւթում գիւղի քեասիբ-քիւսուրների, որբերի, այրիների և թոյլերի գլխին…

Գիւղական ստորին պաշտօնեաները «Նամարդ» տղամարդի ամենատիպիկ մարմնացումն են հանդիսանում: Հաւատո՞ւմ է ընթերցողը, որ իր կեանքում ոչ մի պլէտ, ոչ մի անպատիւ խօսք անգամ հարուստներին չը հասցնող Նամարդ տանուտէրը անհնարին է, որ օրէնը մի քանի անգամ գիւղի այսպէս ասած աղքատ դասակարգին ոտերի տակ, պլէտների անողորմ հարուածների տակ արիւնաթաթախ չանի: Ի հարկէ որ առանց փողոցային հայհոյանքների էլ ծեծ չի լինի: Գիւղական այդ ինքնակոչ պաշտօնեաներն ու հայրերը գիւղական աշխատաւոր մասսայի ճաշակն ու աշխարհահայեացքն այնքան մթնացրել ու ապականել են, որ «տանուտէրների» արժանաւորութիւնը միմիայն նրա վայրենի պլէտների հարուածների և փողոցային հայհոյանքների կոյտի մէջն են գտնում:

«Թորոսը շատ քեաւքին տանուտէր է. ինչ մարդու վրա որ աչքերը կանգնեց՝ նա իր հացը կերաւ, այլ ևս իր ոտքով չէ կարող տունը գնալ: Կամ թէ՝ Կիրակոսին տանուտէր ընտրենք, ջինջ կը մնայ, էլ գողութիւն չի անի: Փոքր գողերն էլ որ մինչև այդ օրը տանուտէրի ձեռքի տակն են եղել, չեն համարձակվի էլ գողութիւն անել»:

Այո, այսպէս է տրամաբանում տգէտ ամբոխը:

Ողորմելի՜ աշխարհահայեացք…

Այդ էլ դեռ բաւական չէ. երբ գիւղի աղա վաշխառուն որևիցէ մի աղքատից չէ կարողանում իր՝ ո՞վ է իմանում ինչ «կեղծ» ու ապօրինի թղթերի, մուրհակների կամ գիւղային տոկոսիքների պահանջը ստանալ և երկիւղ է կրում իշխանութեանը դիմել, ահա հէնց այդ բօպէին էլ աղա վաշխառուին օգնութեան է հասնում գիւղի «տանուտէր-փաշան»: Ապա էլ ի՞ր օրվայ համար են գիւղի հայրերը նրան տանուտէր ընտրել: Չէ՞ որ իր թեկնածութիւնը այն պայմանով է առաջ գնացել, որպէս զի միշտ իրանց խօսքով նստի, կանգնի, չէ՞ որ նրանց հետ թշնամանալու դէպքում կարող են խոկոյն դուրս անել տալ, և վերջապէս չէ՞ որ օրէնքը, գիր-ղալամը, ոյժը, փողը նրանց ձեռքին է. նաչալնիկը, պրիստաւը, միրօվօյ պօսրեդնիկը նրանց բարեկամներն են և միշտ էլ նրանց տներում հիւր են լինում, նուէրներ ստանում, կաշառք ուտում և այլն: Գիւղական տանուտէրները միշտ էլ քաշվում են գիւղի համփաներից: Իսկ «անլիզու հայվան» դարձած գիւղի «քեասիբ-քիւսուրներից» տանուտէրը ինչ երկիւղ կարող է ունենալ: Նրանց ձեռքից ինչ դուրս կը գայ: Պատահած ըմբոստների տունն էլ հօ կարելի է զանազան միջոցներով հիմնայատակ կործանել տալ: Ասացինք, որ նեղ բօպէներում գիւղի հայրերին թև ու թիկունք է հանդիսանում տանուտէրը: Հայրերի ցուցմունքով և տանուտէրի «ահեղ հրամանով»՝ չօուշներով շրջապատված մտնում է վաշխառուների որևիցէ մի պարտապան: Գունատ է նրա դէմքը: Սրտի խորքերից արիւն է կաթում: Նա քաջ գիտէ, որ արիւնախում տանուտէրը իր գլխին մի «օյին» պէտք է բերի: Տանուտէրի առաջ կարկամում է նրա լեզուն. դողդողում է ամբողջ մարմնով: Ահա եկաւ և իր աւազակ պարտատէր աղան: Անիրաւ տանուտէրը առանց մազաչափ ճշմարտութիւնը երևան հանելու, հետևից ընկնելու՝ հրամայում է չօուշներին «վեր կոխել» թշուառ մարդուն: Հաւատարիմ շան նման՝ չօուշները տանուտէրի հէնց այդ հրամանին էին սպասում: Կատաղած շան նման տանուտէրը պլէտով տալիս է, որտեղ պատահում է. յօգնելուց յետոյ հրամայում է չօուշներին «մի լաւ տեսնել»: Պարտապանը արիւնլուիկ դարձած ու կապտած իր սև հոգուն է կարդում… Այնքան խնդիր… աղաչանք… պաղատանք ի զուր անցան: Այդ ամբողջ հանդէսի ժամանակ հայր վաշխառուն տանուտէրի կողքին կանգնած լուռ ու մունջ մտիկ է տալիս:

Վերջապէս նա ցինիկաբար ու քմծիծաղ՝ տանուտէրին է մօտենում և խնդրում է այս անգամն էլ իրան բաշխել… Այնուհետև մի բօպէ թող երևակայէ ընթերցողն անբաղդ մարդու անտանելի դրութիւնը. աչքերը բաց անելով նա տեսնում է՝ մէկ կողմից իր արիւն ծծող, իր տունը քանդող վաշխառուն իր կեղծ ու բորբոսնած «թամասուկներով», իսկ միւս կողմը՝ աւազակ տանուտէրը, այդ կեղծ ու վայրենի օրէնքների ներկայացուցիչը: Եւ այդ բոլորից յետոյ ինչ է մնում անել անբաղդ մարդին, եթէ ոչ մի դառն «ա՜խ» քաշել: «Ձեր կամքն է աղա, ինչպէս որ կը վճռէք, ինձ ընդունակ է»: Բայց այդ «ա՜խ»-ի տակ որքա՜ն թոյն ու արիւն է թաքնված…

Ինչ ասել կուզի, որ ծեծից յետոյ աղա վաշխառուն մի քանի «տափակ» առակներ ու մասլահաթներ անելով՝ նոր սկսում է իր բարբարոս պահանջների և 7 գլխանի դիւային տոկոսիքների «կլասիք» առևտուրը… Գիւղական տանուտէրները դեռ գիւղի վաշխառուների «խաթրուն» են այդ ծառայութիւնները մատուցանում. ապա այդ պնակալեզ մարդ-հրէշները ինչե՜ր չեն գործում յօգուտ ռուսաց բիւրօկրատիկ կարգերի, ինչ ծառայութիւններ չեն մատուցանում նաչալնիկներին, պրիստաւներին, հաշտարար միջնորդին և այլն. նրանց հաճոյանալու անզուսպ տենչով լցված՝ ինչ ծառայութիւններ ասեք չեն մատուցանում նրանց և այն էլ ինչ ստոր և տմարդի ճանապարհներով… Այո, առանց այդ «ստոր» տանուտէրների ռուսական չինօվնիկները ոչ մի գործ, ոչ մի քայլ չեն կարողանում անել ժողովրդին: Այդ բոլորը անում կամ սովորեցնում է նրանց անել տալ՝ միմիայն ժողովրդի ներկայացուցիչ ինքնակոչ տանուտէրը:

Այսօր հայ գիւղական աշխատաւոր մասսայի համար, պետական հարկերից և մինչև անգամ ընտանիքը պահելուց աւելի ծանր ու տաժանը գիւղական աւազակ տանուտէրների կարած տուգանքը, կաշառքը, անզուսպ կամայականութիւնը, հարստահարութիւնն ու աներևակայելի բռնութիւններն են: Նրանց համար օրէնք, արդարադատութիւն, պարտաճանաչութիւն բառերը գոյութիւն չունեն: Գող շան նման՝ աչքերը չորս կողմը չռած, հէնց մտիկ են տալիս, թէ ո՞ր կողմից կարող է մի «ոսկոր» իրանց ձեռքն անցնել: Վա՜յ նրան, ով տանուտէրի և իր անխնայ օգնականների չօուշների և ուրիշ զանազան տեսակ ագէնտների թակարդն ընկաւ. էլ հօ իր հացը կերաւ: Մինչև որ նրա արեան ամենավերջին կաթիլը չը ծծեն, ազատվելու հնար չը կայ: Շատ յաճախ էլ գիւղի տանուտէրները իրանք են իրանց համար կաշառքների և ուրիշ աւազակային միջոցներով ձեռք բերած դրամների աղբիւր ստեղծում: Բաւական է, որ նրա ականջովը որևիցէ մի վիճելի հողի, այգու լուրը հասնի. բաւական է, որ գիւղերում 2 թշնամի բարեկամներ պատահեցին. վերջապէս բաւական է, որ որևիցէ տեղից մի «ոսկոր» գտնելու յոյսի նշոյլ է նկատում. այնուհետև ճար չը կայ՝ պրօվօկացիայի ստոր միջոցներով լինի, տակիցը «բզբզելով» լինի կամ սրտացաւ բարեկամի դեր ստանձնելով՝ այդ միևնոյն է, հարցը նրանումն է, որ նրանց կռւեցնելով, մինչև անգամ եղբայրասպանութեան սև դիմակը հագնելով, փառաւոր կերպով էլ օգտվում է հանգամանքից…

Ահա այսպիսի ծանր և անտանելի պայմանների մէջ է գտնվում հայ գիւղացին: Բայց արդեօք ինչու համար են գիւղական այդ ինքնակոչ և անպիտան պաշտօնեաները. նրա համար, որ աշխատաւոր մասսայի ծով կարիքների և անդարմանելի վէրքերի վրա նորանոր ցաւեր աւելացնեն, թէ՞ գիւղի արատօնեալ հայրերի, աւազակների, գողերի շահերը միայն առաջ տանեն:

Ձեզ ենք դիմում, ձե՜զ… աշխատաւոր մասսաներ, միայն ձեր գիտակից և աներկիւղ ընտրութիւնը կարող է վերջ տալ այդ քաօսային իրականութեանը ձեր ձեռքով միք փորի ձեր գերեզմանը, դահիճ միք դառնայ: Ընտրութիւնների ժամանակ կազմ ու պատրաստ ոյժերով, գիտակից և աներկիւղ ընկերներով առաջ անցէք ձեր իսկական բարեկամ, ձեր դարդերով ու ցաւերով տապակվող մարդկանց ձայն տալու: Ընտրութեան ժամանակ իմացէք, թէ ո՞ւմ էք ձայն տալիս: Մեղք էք: Ջան չը մնաց ձեզանում… Վերջապէս ճանաչեցէք ձեր բարեկամներին ու թշնամիներին, ճանաչեցէք գառան մորթով ձեզ մօտեցող գայլերին: Միք խաբվի նրանց խոստումներից, կեղծ ու թունաւոր լեզուից: Նրանք ձեր զրկողներն են, ձեր տունը քանդողներ և ձեր արիւնը ծծողներ… Բաւակա՜ն է տգիտութեան մահաշունչ խաւարը…

Արամ Փիրջեան

չարխաւին, որ տասնեակ տարիներ իշխում է մարդկանց մտքերի վրա իր գրուածքներով։ Սիրող

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Խանքենդ-աւան, սեպտ. 20-ին

1905 և 1906 թւերը անիծված են տարեգրութեան մէջ։ Այդ տարիներում գիւղացիները չը կարողացան ոչ սերմել և ոչ հնձել և նոյնիսկ անկարող եղան կուշտ փորով հաց ուտել։ Մի կերպ նզովելով այդ ծանր տարիները անցկացրին մերկ ու քաղցած։ Եկաւ 1907 թիւը։ Գիւղացիները լիայոյս էին այս տարի առատ հաց ստանալու, ծածկելու հազարաւոր պակասութիւնները, բայց այդ յոյսը նրանց համար լոկ յոյս մնաց։

Ղարաբաղի գարնանը, երբ ամեն տարի պարբերաբար տեղում էին առատ անձրեւներ և կշտացնում լեռնային ու դաշտային տեղերը և բուսականութիւնը, այս տարի, զարմանալի կերպով, երկնքից չը կաթեց ոչ մի կաթիլ անձրև։ Գիւղացիները օր աւուր սպասում էին անձրևի, բայց բարձր կապուտակ երկինքը խռովել էր, և չէր երեւում ոչ ամպ և չէր տեղում անձրև։

Գիւղացիները պարտքով սերմել էին աշունքին, պարտքով սերմեցին և գարունքին յուսալով ստանալ առատ հունձ, բայց արևի կիզիչ ճառագայթները այրեցին բոլոր հացաբոյսերը, և գիւղացիները մնացին իրանց ձեռները ծոցերին։

Աշնանացանը փոքր ինչ լաւ էր նրանց համար, որոնք առաջ էին վարած (փառաշ), իսկ ուշացածները (սաւաները) այրվեցան, այրվեցան և գարնան բոլոր ցանքսերը և կորէկը։ Այսպիսով գիւղացիները ստացան միայն իրանց սերմը։

Հարկաւ, եթէ երաշտը վնասած լինէր միայն մի գաւառին, միւս գաւառները կը պահպանէին, կօգնէին միւսներին, կարելի էր միւս տեղերից հաց գնել, բայց ցաւալին և ծանրը այն է, որ Խաչէն, Ջրաբերդ, Դիզակ և Վարանդա գաւառների գիւղերի բոլոր բուսականութիւնն էլ այրված է։ Ինչպէս լեռնային գօտում գտնվող Խաչէնը հացի կարիք ունի, այնպէս էլ հացաշատ Ջրաբերդը, Վարանդան և միւսները։ Ի՞նչ կը լինի այս ամենի վախճանը՝ այժմեանից դժուար է բան ասել, սակայն աւելի ծանր և տանջալից օրեր են սպասվում, քան այդ առաջ էր։

Անցեալ տարի Նպաստամատոյց և Կուլտուրական յանձնաժողովները ահագին քանակութեամբ հացի պաշար փոխադրել տուին Ղարաբաղ և այլ կողմեր, և պէտք է ասել, որ մեծ օգնական հանդիսացաւ այդ հացը, սովից և տառապանքից ազատեց շատ-շատերին։ Այդ ուղարկված ալիւրների հետ գիւղացիները խառնում էին տեղական կորէկ-ալիւրը, և շատ մաքուր և համով հաց էր ստացվում։ Այս տարի ոչ կորէկ է ստացված և ոչ գործում են Կուլտուրական և Նպաստամատոյց յանձնաժողովները. ապա ուրեմն տառապանքը գիւղացիութեան համար բաւական զգալի և ծանր է լինելու։

Անցեալ տարի Շուշի-Եւլախ ճանապարհի վրա գտնվող Աղդամի կիրակնօրեայ հաւաքատ բազարը հայերի համար փակ էր. այս տարի թէև բաց է և հայերը խաղաղ և հանգիստ կերպով գնալ-գալ ունեն, բայց դժբաղդաբար Թուրքերի հացն էլ շատ սակաւ է։ Դրա մի մասը երաշտն է ոչնչացրել, իսկ միւս մասը մարախը։ Դեռ Աղդամի Թուրքերը նոր են սարից իջել դաշտը և կալուկասը վերջացրել, այնուամենայնիւ ցորենը վաճառվում է պուդը 1 րուբլի 60—80 կ., գարին 1 րուբլի, կորէկը 1 րուբլի 20 կոպէկ։ Սրանք այնպիսի գներ են, որ աշնան ժամանակ Աղդամը չէ տեսած։ Այս ժամանակներում ցորենը այնտեղ վաճառվում էր 1 րուբլի, գարին 50 կոպէկ, կորէկը 60 կոպէկ։ Պէտք է նկատել, որ այս գները հետզհետէ բարձրանում են։ Բարձրանում է, ինչպէս ասում են, և Ռուսաստանի ալիւրների գինը։ Մօտիկ ապագան, երբ սարերը կը ծածկվեն ձիւնով և կը սպառվեն աշխատանքի աղբիւրները, ցոյց կը տայ, թէ հացը Ղարաբաղի երկրում որպիսի գների կը բարձրանայ և որպիսի քաղցի ճիչ կարձակի գիւղացին։

Բարւոք կը լինէր, եթէ Նպաստամատոյց և Կուլտուրական յանձնաժողովները նորից միանային և այս տարի էլ՝ անցեալ տարվայ պէս՝ գործէին յօգուտ սովից տառապող գիւղացիութեան։ **

—

Գանձակ, սեպտ. 21-ին

Կիրակի օրը Բախշիկ գիւղացի Եփրեմ Վարդանեանը և իր կին Անային գնում են «Աղաջանի-քերծի» ձորը գկեռ քաղելու համար։ Անտառի խորքից մի արջ դուրս գալով յարձակվում է Եփրեմի վրա. վերջինս կռւելով վիրաւորում է արջին երկու տեղից։

Կատաղած արջը, Եփրեմին թողնելով, վազում է դէպի քերծի բարձունքում կանգնած Անային. վերջինս կատաղած գազանից ազատվելու համար իրան ձգում է սարի բարձունքից դէպի անդունդը. ամուսինը, տեսնելով կնոջ սոսկալի քայլը, գնում է գիւղում իմաց տալիս. գիւղացիք, գալով դէպքի վայրը, տեսնում են խեղճ կնոջ կատարեալ փշուր-փշուր եղած մարմինը։

—

Նոր-Բայազէտ, սեպտ. 15-ին

[illegible] են մեր գիւղացիների ցաւերը… Ականջ դնենք գիւղերից եկած լուրերին, տեսնենք՝ ինչեր են կատարվում այնտեղ։ Տարի չէ անցնում, որ ամբողջ գաւառը կամ գաւառի մի մասը չենթարկվի բնութեան պատուհասներին. մի տարի կարկուտն ու ցուրտը, միւս տարին մուկն ու երաշտը մէկը միւսի ետևից քանդում են խեղճ գիւղացու տունն ու օջախը։ Այս տարի գարունը անձրևոտ, ամառը բարեխառն էր, ուստի Նոր-Բայազէտի գաւառի խեղճ գիւղացին առատ բերքի էր սպասում և յուսով էր, թէ նախորդ տարիների վնասներն այս տարի մի կերպ պիտի կարողանայ ծածկել, ոտքի կանգնել, բայց… արտերը դեռ նոր լցրել էին հասկերը, որ կարկուտը խփեց դաշտի մի քանի գիւղերը (Նորադուզ, Ղշլաղ և մասնաւորապէս Նոր-Բայազէտ)։ Ի՞նչ անէ գիւղացին, ի՞նչ անէ ապաւաժոտ լեռնցին…

Պակաս չեն քայքայում խեղճ գիւղացու տնտեսութիւնը տեղիս վաճառականները։ Հագուստեղէնի կարիքը ստիպում է գիւղացիներին գնալ յիշեալ վաճառականներից «նիսիա» հագուստեղէն գնելու։ Ամեն գարուն մեր վաշխառու-վաճառականները գընում են գիւղերը իրանց «նիսիէքը» հաւաքելու։ Միամիտ, չափից դուրս տոկոսներով ծանրաբեռնված գիւղացին տալիս է նրանց 10—15 արշին հասարակ ճոթի փոխարէն բաւականին իւղ, պանիր և նոյն՝ իսկ իր լծկան եզներն ու կաթնատու կովը։ Ով որ եղել է գիւղերում, գիտէ, թէ ինչ տեսակ կապով է կապված իր լծկանի, իր զաւակների կաթնատու կովի հետ գիւղացին, և այդ միանգամայն հասկանալի է։ Առանց եզան ու կովի՝ լեռնցի գիւղացին չէ կարող գոյութիւն ունենալ։ Նա իր աղքատ տընտեսութեամբ գիւտանտեսին չէ գրաւում, մթերքների սակաւութեամբ մասնագէտ տընայնագործներին չէ հրապուրում, իսկ անողոք բնութիւնը կացութիւն չէ հարցնում։ Ուրեմն ի՞նչ պէտք է լինի նրա դրութիւնը։

Առհասարակ գաւառիս գիւղերից շատ քչերը անվտանգ են մնում երկնքի պատուհասներից. այդ գիւղերի բերքը այնքան է, որ հազիւ թէ «իրանց իւղը իրանց տապակէ». մինչդեռ վեցամսեայ ցրտաշունչ ձմրան սկզբին հազար ու մի դարդ ու ցաւ է կանգնած խեղճ գիւղացու դէմ։

Վաղենակ

—

Դարադաղլու (Գանձ. գաւ.) սեպտ. 15-ին։

Ղարադաղլուն պատկանում է այն գիւղերի շարքին, որոնք կովկասեան ընդհարումների ժամանակ դժբախտութիւն ունեցան ենթարկվելու վանդալական արշաւանքների։ Գանձակի գաւառի (նոյն իսկ ուրիշ գաւառների) հայկական բոլոր գիւղերի համար Ղարադաղլուն իր առատ պտղաբերութեամբ և հողի որակութեամբ անպայման նախանձելի է։ Հողը առատ կերպով վարձատրում է աշխատաւոր գիւղացուն։ Ղարադաղլուեցին չէ յիշում, թէ երբևիցէ անցեալում նա հացի կարօտութիւն քաշած լինի։ Տարվայ ընթացքում եթէ նա աշխատել է 2—3 ամիս, մնացեալ ժամանակամիջոցում անհոգ նստել ու վայելել է։ Նրանց հողը գտնվելով դաշտային մասում՝ ոռոգվում է և մի զարմանալի զուգադիպութեամբ ծածկված է ջրանցքների ցանցով, որոնք ոչ պակաս հեշտացնում են գիւղացու աշխատանքը։ Դաշտամասերում հազիւ գտնվի այս տեսակ ջրառատ գիւղ։ Բացի ցորեն ու գարուց՝ ցանում են նաև կորէկ, կտաւհատ, բրինձ, բամբակ, ձմերուկ և այլն. զբաղվել են նոյնպէս շերամապահութեամբ և այգեգործութեամբ։ Առհասարակ հայկական գիւղերում հողի բաժանումը լինում է տարեց-տարի կամ մի քանի տարիներից յետոյ անընդհատ։ Հազուագիւտ են գիւղեր, որտեղ բաժանումը տեղի չէ ունենում, այլ ամեն մի գիւղացի, ինչպէս հօրից մնացած անշարժ ստացուածքի, տիրապետում է մի քանի կտոր որոշեալ հողամասերի. այս կարգին է պատկանում նաև Ղարադաղլուն։ Այստեղ հողը արհեստական կերպով պարարտացնելու ոչ մի միջոցի չեն դիմում։ Եթէ մի հողամաս այս տարի դիցուք վարվել է, այնուհետև մինչև 6—8 տարին այլ ևս չէ հերկվում, այլ թողնվում է հանգստանալու. մինչդեռ սարահարթերում գտնված գիւղացիք, համարեա առանց բացառութեան, մի տարուց աւել հողը հանգստանալու համար չեն թողնի, և այս ոչ թէ կամայ, այլ ակամայ կերպով, որովհետև սակաւահողութեան պատճառով խեղդված են։ Հէնց այս բնական պատճառից է ծագում գլխաւորապէս այն համատարած սովը, որ սպառնում է հօթնգլխեան հիդրայի նման կուլ տալ ամբողջ գիւղացիութիւնը, թէպէտ կան ուրիշ պատճառներ ևս, ինչպէս սակաւահողութիւն, արհեստական պարարտացում և այլն։

Եւ այսպէս՝ Ղարադաղլուն սակաւահողութեան կամ հողի պտղաբերութեան տեսակէտից անհամեմատ բարելաւ վիճակի մէջ է եղել, քան միւս հայկական գիւղերը։ Չը նայած որ գիւղացիական-երկրագործական տեսակէտից Ղարադաղլուն բոլոր բարեմասնութիւններով շնորհալի ու նախանձելի է եղել, բայց ծոյլ ու յեղդ շինականը չի մտածել կամ ջանք չէ գործադրել օգտվելու իր հողից՝ այն բնատուր «ոսկու հանքից», ինչպէս իրաւամբ նկատում են շրջակայ Թուրք գիւղացիները։ Եւ մարդ ապշում է, թէ ինչպէս նրանց միջից դուրս չէ եկել գոնէ մի [illegible] ված լինելով Թուրքական գիւղերով, գտնըվելով միշտ յարաբերութեան մէջ նրանց հետ՝ իւրացրել են այն, ինչ որ յատուկ է նրանց, այն է՝ ծուլութիւն, ագիտութիւն իր տնտեսականի վերաբերմամբ և, որ գլխաւորն է, վրէժխնդրութիւն, որը վերջին տարիներն այնքան ծաղիկ կեանքեր ու հերոսներ խլեց նրանցից, և հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ միայն մարեց այդ վրէժխնդրութիւնը։ Սովորած լինելով ծուլութեան, չափազանց անհոգ են դէպի իրանց հողը։ Մենք տեսնում ենք, թէ ընդհարումների ժամանակ վնասված գիւղերը՝ Բաղան, Ղազախ գիւղը և այլն ինչպէս շուտով վերահաստատվեցին իրանց ծննդավայրում. մինչդեռ այս ձգտումը կարծես մեռած լինի ղարադաղլուեցոց մէջ. թողած ոսկէ հայրենիքը՝ նրանք թափառում են Գանձակում քաղցած. կան վերահաստատվածներ ևս, բայց դրանց թիւը շատ քիչ է։

Ո՜վ ղարադաղլուեցիներ, ի՞նչ էք մտածում, ի՞նչ ակնկալութիւններ ունէք օտարութիւնից, ինչո՞ւ էք խռով ձեր հայրենիքից. ձեզ են կանչում անգութի ձեռքով կտրված ձեր հայրենիքի ամեն մի նոր ծիլ արձակած ծառն ու թուփը. ձեզ են սպասում և ձեր ձեռքով վերանորոգված են ուզում տեսնել հայրենի փլատակները. զգված օտարին հիւրընկալելուց՝ մրմունջ են կարդում ձեզ ձեր ծննդավայրի հողն ու ջուրը, ձեր նախահայրերի ոգիները. եկէք, թողէք մուրացկանութիւնը, վերանորոգեցէք հայրենիքը և ապրեցէք որպէս աշխատաւոր գիւղացիներ երգելով ձեր հին հայրերի հօլովէլը… Յ. Երիցեան

—

Ալէքսանդրոպոլ, 22 սեպտեմբերի

Ս. Փրկչի դպրոցի խայտառակ դրութիւնը հետևեալ կերպով լուծվեց։

Հոգաբարձութիւնը մի քայլ առաջ գնաց և գրաւոր յայտնեց նորեկ աւագ ուսուցչին, որ դպրոցի տնտեսական և ուսումնական մասի ղեկը ձեռք առնէ։

Թէև երեք անձնաւորութիւն իրանց անմիտ քմահաճոյքով ցանկանում էին այդ կարգադրութիւնը բարձի թողի անել, բայց տեղիս ուսուցչական միութիւնը միջամտեց և, մի «հրաշալի քէֆ» սարքելով, հակառակորդներին հաշտեցրեց։

Քէֆի ժամանակ երեք խառնակիչներն աւագ ուսուցչին ձեռք են մեկնում, համբուրվում և խօսք տալիս՝ «յանուն դպրոցի օգտին այսուհետև ամեն ինչ թողնել և կանոնաւոր պարապմունք սկսել… Այսուհետև թող վերանայ մեր միջից անախորժութիւնները և ձեռք-ձեռքի տուած գործենք միասին»…

Եթէ, իսկապէս, այդ խոստումների մէջ առաձին կողմնակի միտումներ չեն պարունակվում, շտապում ենք շնորհաւորել ս. Փրկչի ուսուցիչների հաշտութիւնը, ցանկանալով նրանց յարատև բեղմնաւոր համերաշխութիւն։

Մենք էլ հէնց այդ էինք ցանկանում։

Մենք ցանկանում ենք և պահանջում, որ հեռու մնան դպրոցից ընդմիշտ սուր ինտրիգաններն ու անվայել վարմունքները, որոնք քիչ էր մնացել մեր մատաղ սերնդի կրթավայրը խորտակէին… Գ. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը վերստին հարց է յարուցել ոռոգելու Մուղանի դաշտը (Բագուի նահ. Ջէվադի գաւ.)։ Ջրատեխնիքական հետազօտութիւնների համաձայն, որ կատարեց 1900 թ. Կովկասի ջրերի տեսչութիւնը, հնարաւոր է հանդիսանում ոռոգել Մուղանի դաշտը մօտ 143,000 դեսեատին տարածութեան վրա, բոլոր աշխատանքները կատարել տալով 5,011,252 րուբլով։ Այս ընդհանուր տարածութիւնից գլխաւոր վարչութիւնը մտադիր է 1908 թւին ոռոգել 8000 դես., որ մօտ է Պարսկաստանի ռուսական սահմաններին։ Գլխաւոր վարչութեան մէջ եղած տեղեկութիւնների համաձայն, Մուղանի դաշտի հողերը, եթէ բաւականաչափ ոռոգվեն, կարող են օգտակար լինել ինչպէս բարձր գիւղատնտեսական մշակութիւններ զարգացնելու, այնպէս և եկւոր հողազուրկ ազգաբնակութեանը տեղաւորելու համար։ Մուղանի դաշտի 8000 դեսեատինը ոռոգելու աշխատանքների նախագիծը քըննվել է մասնագէտ ջրագէտների յատուկ ժողովում, որը յիշեալ տարածութիւնը ոռոգելու ծախքերը որոշել է 285,894 րուբլի. այս գումարից 100,000 ր. մտադրութիւն կայ պայմանով մտցնել երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան 1908 թ. նախահաշուի մէջ։

◆ Մօտ օրերս կը կայանայ Թիֆլիսի բորսային ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը՝ մի քանի պաշտօնական անձինք և բորսային միջնորդներ (մակլերներ) ընտրելու համար։ Բորսան կանոնաւորապէս կը սկսէ գործել յունվարի մօտերը։

◆ Վլադիկավկազում երդ.-հաւատ. Ա. Կանուկովը վճռել է հրատարակել օսերէն լեզուով շաբաթաթերթ «Զօնդ» անունով, որի առաջին համարը լոյս է տեսնելու մօտ օրերս։

◆ Տիկին Զ. Մեհրաբեանը դիմել է Թիֆլիսի նահանգապետին և խնդրել է թոյլատրել իրան հրատարակել ամենօրեայ թերթ հայերէն լեզուով «Նոր-Ալիք» անունով։

◆ Թիֆլիսի ապրանքային կայարանում ժանդարմական ոստիկանութիւնը գրաւել է մի արկղ՝ «բերդան» սիստեմի հրացաններով։ Արկղը ուղարկված է Մօսկվայից Կարս՝ որսորդական հրացանների անուան տակ։

◆ Թիֆլիսի նահանգական մասնաժողովը հաստատել է «Մուրավէյնիկ» նոր ընկերութեան կանօնադրութիւնը։ Ընկերութեան նպատակն է հրատարակել մի շարք ժողովրդական գրքեր և բրօշիւրներ, ինչպէս ինքնուրոյն, այնպէս և թարգմանական՝ հայերէն, վրացերէն, ռուսերէն, Թուրքերէն և այլ լեզուներով։

◆ Ինչպէս հաղորդում են «Зак.» լրագրին Դուշէթից, տեղական բանտում բանտարկել են Ի. Գ. Ճավճավաձէի սպանութեան գործի առիթով Պ. Ասատիանիին և Ցխյամուրի գիւղացիներից երկուսին։

◆ Սեպտեմբերի 24-ին Մետեխի բանտից արձակել են Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր ինժիներ Արշակ Ս. Բաբօվին։

◆ Վաղը, երեկոյեան ժամը 5-ին, գիւղատնտեսական ընկ. շինութեան մէջ կը կայանայ ժողովրդական համալսարանի հայկական սեկցիայի ժողովը։

◆ «Бак. Эхо» լրագրի ասելով, Ջիվանշիրի գաւառի պրիստաւ Գրիգորի Բալայանին, վերցնելով իր մօտ հաւաքված պետական դրամները, անյայտացել է յայտնի չէ թէ ուր։ Նրան որոնելու համար հեռագիրներ են ուղարկված։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 23-ին, Նիկօլաեվսկի փողոցում, Միքայէլ Գինաշվիլու արճարանում խուզարկելու ժամանակ ոստիկանութիւնը գտել է մօտ մէկ պուդ ռուսերէն տառեր։

—

Սեպտեմբերի 23-ին, երեկ. ժամը 8 և կէսին, Չէլիձէի պանդոկում, որ գտնվում է Կարաւէլնիկսկի պառվայրում, 1-ին թաղամասում, մտնում են հինգ անյայտ զինված չարագործներ և մահվան սպառնալիքով կասսայից յափշտակում են 17 րուբլի, որից յետոյ ապահով անյայտանում են։

—

Սեպտեմբերի 23-ին 10-րդ ոստիկանատան պաշտօնեաները կալանաւորում են Տէլավի շրջանի բնակիչ Գէօրգի Բաուսեվին, որը Քութայիսկի, Դիդուբէի և Չեբոմէտիեվսկի փողոցներով բաժանելիս է եղել թռուցիկներ։ Նրա բնակարանը խուզարկելիս գտնվել են անլէգալ գրուածքներ և զանազան թղթեր։

—

Սեպտեմբերի 23-ին ոստիկանութեան պաշտօնեաները ձերբակալում են Թիւրքահպատակ Մանուկ Մուրադեանին, որը մտնելով Տէր-Դաւթեանի խանութը (Պեսկովսկի փողոց) կամեցել է գողանալ երկու պլինձ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Կառավարութիւնը, «Товарищъ» լրագրի ասելով, առաջին հերթում Պետական Դումային կառաջարկէ հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի հիման վրա մտցված ագրարական օրէնքները և ինքնավարութեան ու տեղական դատարանի բարենորոգումների ծրագիրը հաստատելու հարցը։

◆ Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ տխրահռչակ Բուլացելի միջնորդութեամբ Բարձրագոյն ներումն է շնորհված Սիմֆերոպօլի ջարդերի գործի առիթով մեղադրվողներին։

◆ Եկատերինօսլավից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ Չերքասսկի գիւղում երկու անյայտ անձնաւորութիւններ կալանաւորվում են իբրև էքսպրօպրիատօրներ։ Ամբոխը դուրս հանելով նրանց կալանաւորութեան տնից՝ տեղն ու տեղը սպանեց։

◆ Բօրիսօվից հաղորդում են «Слово» լրագրին, որ այնտեղ կալանաւորված ու բանտարկված է Մինսկի բանտում նախկին զէմսկի կառավարիչ Անդերսին, որը մեղադրվում է արգելված գրականութիւն տարածելու մէջ։ Նրա հետ կալանաւորված են իր երկու փոքրահասակ զաւակները, որովհետև նա որբևայրի է և չունի մէկը, որի մօտ կարողանար թողնել նրանց։

◆ Արտասահմանից մօտ օրերս Պետերբուրգ է վերադարձել զինուորական մինիստր ինֆանտերիայի գեներալ Ռեդիգերը և վերսկսել է իր պաշտօնավարութիւնը։ «Русь» լրագրի ասելով, նրա հրաժարականը շատ մօտ է համարվում։

◆ Պետերբուրգի քաղաքային վարչութեան հաւաքած տեղեկութիւններից, ինչպէս հաղորդում է «У. Р.» լրագիրը, երևում է, որ վերոյիշեալ քաղաքում մուրացկանութեամբ ապրողների թիւը հասնում է 16,000-ի։ Նրանք բաժանվում են երկու կարգի. մի մասը մուրացկանութիւնը դարձրել է իր համար արհեստ, իսկ միւսը՝ ուղղակի կարօտութեան մէջ է։ Դրանց թւում կան 17 հրէաներ։ Մուրացկանների մեծ մասը 17—35 տարեկան են։

◆ Վերջին օրերս, «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, Պետերբուրգի ոստիկանութիւնը Վասիլեվսկու կղզու վրա կատարել է մի շարք կարևոր խուզարկութիւններ. կալանաւորված են 10 հոգի։ Դրանց թւում կան երկու կին, որոնց վրա նոյնպէս կասկած կայ, որ պատկանում են սօցիալիստ-յեղափոխական - մաքսիմալիստների խմբակին։ Կալանաւորութիւնները տեղի են ունեցել հետևեալ եղանակով։ Կալանաւորներից մէկի վրա կասկած էր ընկել, և ոստիկանութիւնը նրա մօտ խուզարկութիւն կատարելով գտնում է մի քանի կարևոր փաստաթղթեր և մի մաուզերի ատրճանակ։ Այնուհետև նրա տան վրա հսկողութիւն է նշանակվում և բռնվում է նրան այցելող մի ուրիշ մաքսիմալիստ, որի տանը գտնվում է ռումբ շինելու գործիք և ձեռնարկ։ Այդ ձևով խուզարկում են ուրիշներին ևս, որոնց մօտ գտնվում է «մաքսիմալիստների ու սօցիալիստ-յեղափոխականների միացեալ կոմիտէի» կնիքը, պատրաստի ռումբ, մեծ քանակութեամբ արգելված գրականութիւն և թղթակցութիւններ։ Վասիլեվսկի կղզում խուզարկելիս միաժամանակ խուզարկութիւններ են կատարվել քաղաքի ուրիշ մասերում ևս։ Կալանաւորվածների մեծ մասը գործարանական բանւորներ են։ Ենթադրում են, որ բացվում է մի նորակազմ յեղափոխական խմբակ։ Սեպտեմբերի 17-ի գիշերը մի շարք խուզարկութիւններ են կատարվել ֆաբրիկաների ու գործարանների բանւորների մէջ ևս։ Մեծ քանակութեամբ արգելված գրականութիւն է գտնվել։ Կալանաւորվել են 3 հոգի։

◆ Նորերս, «Русь» լրագրի ասելով, լոյս է տեսել Պետական Դումայի նախկին անդամներին նպաստներ բաշխող ընկերութեան հաշիւը։ Այդ հաշուից երևում է, որ մինչև 1907 թւի օգոստոսի 1-ը հաւաքված է եղել 6820 րուբլի 35 կոպէկ։ Այդ գումարից նըպաստ է տրված Պետական Դումայի նախկին անդամներից 31 հոգու միանուագ 1365 րուբլի, 4 հոգու հիւանդութեան ու բանտում եղած ժամանակ՝ 277 րուբլի, նախկին երկու անդամների գործը պաշտպանող փաստաբաններին՝ 400 րուբլի, երկուսի համար առաջարկված է գրաւական՝ 1000 րուբլի, 6 հոգու օժանդակութիւն է տրված 670 րուբլի։ Ուրեմն ընդամենը նպաստ է մատուցված 6464 րուբլի 42 կոպէկ։ Մընում է 19 րուբլի 8 կոպէկ։ Ընկերութիւնը տեղեկութիւն է ստացել, որ ժողովրդական ներկայացուցիչներից 33 հոգի ևս գտնվում են չքաւորութեան մէջ և կարօտ են օգնութեան։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

„Извѣстія Кавказскаго Отдѣленія И. М. Археологическаго Общества“, выпускъ II, Тифлисъ, 1907.

Թիֆլիսի Հնագիտական ընկերութեան ներկայ երկրորդ պրակը, որ լոյս տեսաւ այս օրերս, պարունակում է իր մէջ նախ այն զեկուցումները, որոնք կարդացվել են ընկերութեան նիստերում և ապա նիստերի արձանագրութիւնները։

Պրակը սկսվում է Կ. Հանի զեկուցումով Նաքալաքեվի կոչված աւերակների մասին։ Նաքալաքեվին գտնվում է Արևմտեան Վրաստանում, ոչ հեռու Սև-ծովից։ Հանի կարծիքով Նաքալաքեվին համապատասխանում է Պրոկոպիոսի յիշատակած Արքէօպօլիս քաղաքին, որ շինված է եղել Քրիստոսի ծննդից երեք դար առաջ և ունեցել է իր ժամանակին առևտրական և քաղաքական մեծ նշանակութիւն։

Ա. Գրենի զեկուցումը տալիս է մի շարք հետաքրքրական տեղեկութիւններ Ծալկայի և Գետաբէկի մօտ գտնված հնութիւնների մասին, որոնք վերաբերում են մինչև քրիստոնէական և քրիստոնէութեան հնագոյն շըրջաններին։

Հ. Առաքելեանի զեկուցումը պարունակում է Հին-Ջուղայի աւերակների ուսումնասիրութիւնը և հին քաղաքի նշանակութեան պարզաբանութիւնը։

Ե. Տակայշվիլի զետեղել է չորս զեկուցում Քութայիսի և Թիֆլիսի նահանգներում հետազօտած բազմաթիւ հնութիւնների մասին։

Գրքի մէջ կան մի քանի նկարներ և արձանագրութիւնների պատճէններ։

Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 21-ին

Թիֆլիսի չքաւոր հայ երեխաներին օժանդակող «Լոյս» ընկերութեան վարչութիւնը խոնարհաբար խնդրում է ձեզ տեղ շնորհել ձեր լրագրի մօտակայ համարներից մէկում հետևեալ հաշուետուութեան։

Ներկայ տարվայ օգոստոսի 26-ին վարչութիւնս յօգուտ ընկերութեան «Պալերմօ» այգում կազմակերպեց մի ժողովրդական զբօսանք, որի հաշիւը հետևեալն է.

Մուտք. Տոմսակների վաճառումից—274 ր., վիճակախաղից—120 ր. 46 կ., օդակների խաղից—15 ր. 50 կ., ափսոսատ հաւից— 8 ր. 25 կ., երեխաների նշանաձգութիւնից— 3 ր. 45 կ., հանելուկ տիկնիկից—2 ր., ուրկանից—14 ր. 20 կ., ծաղիկների և կօնֆէտաիի վաճառումից—29 ր. 90 կ., բուֆէից—82 ր. 46 կ., նուէրներ—1 ր. 50 կ., ընդամենը 551 ր. 72 կ.։

Ելք. Այգուն վարձ—11 ր., լակէյներին—8 ր., օրկեստրին—28 ր., սադանդարներին—20 ր., աֆիշաների, տոմսակների և լրագրական յայտարարութիւնների տպագրութեան—13 րուբ. 9 կ., բուֆէտի վրա ծախսված է— 72 ր. 30 կ., ծաղիկների և կօնֆէտաիի—8 ր. 15 կ., կիօսկեր շինելու, իրեր տեղափոխելու և այլ մանր ծախքեր—32 ր. 99 կ., ընդամենը 292 ր. 53 կ.։

Ծախքը մուտքից դուրս գալով ընկերութեան օգտին մնում է զուտ 259 ր. 19 կ.։ Վիճակախաղից անվաճառ իրեր մնում են ընկերութեան գրասենեակում 131 կտոր՝ արժողութեամբ 135 րուբլու։ Հետևապէս զբօսանքից զուտ արդիւնք ստացված է 394 ր. 19 կ.։

Վարչութիւնս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում վիճակախաղի և բուֆէի [illegible] որոնց անունները մի առ մի գրված են ընկերութեան մատեանում, և այն բոլոր անձերին, որոնք այս կամ այն կերպ մասնակցութիւն ունեցան զբօսանքի գործում։

Նախագահ վարչ.՝ Գ. Լևոնեան
Քարտուղար՝ Արտ. Գրիգորեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

IV

Եւրօպական միջամտութեան ամենատաք ժամանակ՝ մի օր Կ. Պօլսում մտայ Իզմիրլեան պատրիարքի մօտ, որ նոր էր տեսնուել անգլիական դեսպանի հետ։ Շատ տրխուր էր Մատթէոս սրբազան։ Դեսպանը՝ սըր Ֆիլիպ Քըրրի, որ հայկական բարենորոգումների ջերմ պաշտպանն էր և չէր քաշվում ամենախիստ լեզու գործածել Բ. Դրան պաշտօնեաների դէմ, ասել էր Իզմիրլեանին. «Հայոց հարցի պատճառով չենք կարող պատերազմ յայտարարել Թիւրքիային»։ 1880-ից սկսած մինչև 1896 եւրօպական միջամտութեան անաջողութեան ամբողջ գաղտնիքը այդ «չենք կարող»-ի մէջն է։ Եըլդըզի պալատում շատ լաւ գիտէին, որ 61-րդ յօդուածի պատճառով ոչ մի եւրօպական պետութիւն և ոչ իսկ Անգլիա, որ գործի գլուխ էր կանգնած շնորհիւ Կիպրոսի դաշնագրութեան, բռնի միջոցների պիտի չը դիմէին։ Երբ լօրդ Կիմբըրլի, անգլիական արտաքին գործերի մինիստրը, 1895 թ. յունիսի 19-ի իր շրջաբերականով եւրօպական դահլիճներին առաջարկեց, որ սուլթանին 48 ժամ միայն ժամանակ տրվի բարենորոգումների ծրագիրը լրիւ ընդունելու, որին պիտի հետևէր անշուշտ թշնամական ցոյցը, Բ. Դուռը գիտէր անկասկած, որ Ռուսաստանը պիտի հակառակէր դրան։ Եւ իրօք Լօբանօվ-Րօստօվսկին պատասխանեց Պետերբուրգի անգլիական դեսպանին, թէ ռուսական կառավարութիւնը համաձայն չէ, որ սուլթանի վրա այս եղանակով ճնշում գործ դրվի։ Միևնոյն բանը Լօբանօվ արդէն յայտարարած էր մի ամիս առաջ։ Պիտի ընդդիմանար արդեօք Ռուսաստանն իրապէս, եթէ Անգլիա իր հաշուին պատերազմ սկսէր Թիւրքիայի դէմ, այդ՝ դիպլօմատների գաղտնիքն է, բայց իրողութիւնը սա է, որ այդ պատասխաններից յետոյ ևս լօրդ Սօլզբըրի ամենախիստ յանդիմանութիւններ էր կարդում Լօնդօնի Թիւրք դեսպանի գլխին և նոյն տարին նոյեմբերի մէջ իր արտասանած ճառում սպառնալիքներ էր ուղղում սուլթանի հասցէին, մինչև իսկ Միջերկրականի անգլիական նաւատորմիղը ուղարկել էր մինչև Դարդանէլի բերանը, որտեղից ամեն րօպէ կարող էր յանկարծ երևալ Օրթաքէօյի առջև, որի բարձունքի վրա է կանգնած Եըլդըզի պալատը։ Անշուշտ մի ուրիշ պատճառ ևս լինելու էր, որ անգլիական կառավարութիւնն և անգլիական լրագիրները՝ իրանց հակաթիւրքական արշաւանքի մէջ այդքան առաջ գնալուց վերջը յանկարծ կանգ առան և մեղմացան։ Լօրդ Սօլզբըրի մինչև իսկ ետ էր առել իր այն առաջարկութիւնը, որ մայիսեան ծրագրի գործադրութեան միակ երաշխաւորութիւնն էր։ Նա առաջարկել էր մի խառն յանձնաժողով նշանակել 4 Թիւրքերից և 3 եւրօպացիներից ընտրված, որ պիտի մնար մշտապէս Վանում, Էրզրումում կամ Բիթլիսում և տեղնուտեղը հսկէր ծրագրված բարենորոգումների գործադրութեան վրա։ Նոյն իսկ այնպիսի մի համեմատաբար անմեղ միջամտութիւն՝ այն է Նահանգապետների ընտրութեան մէջ Կ. Պօլսի դեսպանատների մասնակցութիւնը՝ դուրս ձգվեց ծրագրից, և այնուհետև և այսօր պարզ երևում է, թէ ոչ միայն հայերի, այլ նաև Թիւրքերի և առհասարակ երկրի խաղաղութեան և ապահովութեան համար ինչ աստիճան կարևոր է, որ նահանգական իշխանութեան գլխին կանգնած լինեն պարտաճանաչ և օրինաւոր վալիներ և ոչ թէ զանազան Ֆէրիդ-փաշաներ և Ալի-բէյեր....։ Բարենորոգումների ծրագրից գործադրվեց միայն այն, որ մի քանի տեղ նշանակվեցին հայ մուաւիններ (փոխ-նահանգապետներ և փոխ-գաւառապետներ) և մի քանի էլ հայ պօլիցիականներ, և այս վերջիններն էլ անշուշտ այն տեսակ արարածներից, որոնք աւելի իրանց դիրքը պահպանելու մասին էին մտածում, քան թէ իրանց ազգակիցների դէմ գործ դրված հարստահարութիւնները սեղմելու։ Նոյն իսկ Զէյթունին զլացան հայ կառավարիչ տալ և յոյն նշանակեցին։ Ռուսաստանի 1895-ի վերաբերմունքը դէպի հայկական բարենորոգումները շատ պարզ կերպով պատճառաբանված է Լօբանօվի պատասխանի մէջ, որ ասում է. «Ռուսաստանը ուրախ կը լինի, որ Թիւրքական վարչութիւնը բարեփոխվի և սուլթանի քրիստոնեայ հպատակները կեանքի և գոյքի լաւագոյն ապահովութիւն ունենան, բայց նա հակառակ է, որ Ասիայում ստեղծվի այնպիսի մի երկիր, ուր հայերը բացառիկ արտօնութիւններ վայելեն։ Կ. Պօլսի 3 դեսպանների (անգլ., ֆրանս. և ռուս.) ծրագիրը շատ ընդարձակ տարածութեան համար է կազմված. նա գրաւում է համարեա Փոքր-Ասիայի կէսը։ Ռուսաստանի հայերը գրգռված դրութեան մէջ են և տեղական ռուսական իշխանութիւնները ստիպված են խիստ միջոցներ ձեռք առնել, որ զէնք և փող չուղարկեն սահմանից դէնը (Թիւրքաց Հայաստան)։ Հասկանում եմ, որ անգլիական կառավարութիւնը՝ ի նկատի ունենալով որ Անգլիան կամ անգլիական գաղթականութիւնները, հեռու լինելով այդ երկրից (Թիւր. Հայաստանից), անտարբեր կերպով են վերաբերվում այս հարցին, բայց Ռուսաստանը չէ կարող ընդունել, որ իր սահմանի վրա մի նոր Բօլգարիա կազմվի» (Կապոյտ գիրք, Turkey № 1 (1896) էջ 87)։ Եւ չը նայելով որ այնուհետև լօրդ Սօլզբըրին քանիցս յայտարարեց թէ Պետերբուրգի դահլիճին և թէ Բ. Դրանը, որ անգլիական կառավարութիւնն ևս հեռու է որ և է հայկական ինքնավարութեան մտքից և պահանջում է միայն հայ ժողովրդի կեանքի և գոյքի ապահովութիւնը, այնուամենայնիւ չը կարողացաւ առաջ տանել գործը և դնել տալ այնպիսի հողի վրա, որով խոստացված բարենորոգումները prof գործադրվէին և ոչ թէ թղթի վրա միայն մնային։ Այս անաջողութեան պատճառ քաղաքական աշխարհում համարում են բացի Ռուսաստանի կասկածոտ վերաբերմունքից այլ և այն, որ Գերմանիան գաղտնաբար գործում էր Կ. Պօլսում ընդդէմ Անգլիայի և սուլթանին հաւատացնում, թէ հայկական հարցի պատճառով Անգլիան չէ պատերազմելու նրա դէմ։ Գերմանիան մէկից աւելի պատճառներ ունէր այդպէս վարվելու։ Նրա փայփայած ծրագիրն էր Թիւրքիան ընդհանրապէս և Փոքր-Ասիան մասնաւորապէս իր ազդեցութեան տակ ունենալ, որպէս զի կարենայ իրագործել Բաղդադի երկաթուղին ձեռնտու պայմաններով։

Եւ այսպէս՝ Ռուսաստանը բացարձակապէս հակառակ էր, որ Հայաստանին տրվի թէկուզ ամենանեղ սահմաններում մի որ և է ինքնավարութիւն. Գերմանիան աւելի որոշ կերպով հակառակվում էր սուլթանի վրա ճնշում գործ դրվելուն և մանաւանդ Փոքր-Ասիայում Անգլիայի կամ Ռուսաստանի ազդեցութեան ուժեղանալուն, որ անշուշտ կը պատահէր, եթէ հայերը նրանց միջոցով ստանային իրանց պահանջած բարենորոգումները. միւս պետութիւններից՝ պաշտօնական Ֆրանսիան չէր ուզում Ռուսաստանի կամքին ընդդէմ վարմունք ունենալ, թէև բազմաթիւ հայասէր Ֆրանսիացիք՝ սկսած կղերական հայր Շարմատից մինչև ընկերվարական Պրէսանսէն՝ ոչ մի ջանք չէին խնայում ի նպաստ հայերի, և նոյնիսկ Կ. Պօլսի ֆրանսիական դեսպանը եռանդուն կերպով աջակցում էր հայկական դատին, որքան իր պաշտօնական հրահանգները հնարաւորութիւն էին տալիս (Ֆրանս. Դեղին գիրք, Affaires arméniennes 1895—1896 Paris MDCCC XCVII)։ Աւստրիան հետևում էր Գերմանիային, թէև եղաւ ժամանակ, որ կոմս Գօլուխօվսկին մինչև անգամ մի փոքր եռանդ ցոյց տուեց, իսկ կայսրը Ֆրանց-Յովսէփ՝ Վիէննայի Մխիթարեանների աբբահօր՝ Այտընեան արքեպիսկոպոսի միջնորդութեան շնորհիւ նոյնիսկ մահից ազատել տուեց բազմաթիւ հայ բանտարկեալներ։ Իտալիան էլ թէև համակիր՝ բայց ազդեցիկ չէր Կ. Պօլսում։ Բայց ամենագլխաւորն, ինչպէս յօդուածիս սկզբում ասացինք, այն էր, որ սուլթանը համոզված էր, որ հայոց պատճառով իր դէմ բռնի միջոցներ պիտի չը գործադրվէին, հետևապէս իրան ազատ էր զգում խաղացնելու բոլորին թղթէ բարենորոգումներ խոստանալով։ Բազմաթիւ օրինակներից յայտնի է, որ կարմիր վեհապետն և իր cliqae-ը եւրօպական դեսպանների միջամտութեանը սկզբին միշտ ամենախիստ ընդդիմութիւն են ցոյց տալիս, բայց երբ զգում են, թէ «բարեկամական ազդարարութիւններից» յետոյ զրահակիրներ կամ թնդանօթ են երևալու, զիջում են և ընդունում նոյնիսկ ամենածանր պայմաններ։

Սարուխան

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Աթաբէգ-Ազամի սպանութիւնը, «Times» լրագրի խօսքով, կարող է շատ վատացնել Պարսկաստանի լուրջ դրութիւնը։ Յանցանքի բնաւորութիւնից երևում է, որ գաղտնի ընկերութիւնները Պարսկաստանում, որոնք այնքան աչքի ընկնող դեր խաղացին նորագոյն շարժման մէջ ի նպաստ ռեֆօրմների, իւրացրել են արևմտեան ծայրայեղ յեղափոխականների մեթոդներից մի քանիսը։ Մարդասպանի և նրա համախոհի մօտ գտնված նամակներից երևում է այն ուշադրութեան արժանի փաստը, որ Աթաբէգ-Ազամը սպանվել է այն յեղափոխական կոմիտէի հրամանով, որի գլխաւոր կենտրոնը գտնվում է Բագւում։ Յանցանքի նպատակը, կարծում է «Times», պարզ է։ Աթաբէգ-Ազամը վայելում էր այն համբաւը, որ նա միայն կարող է ճնշել ի նպաստ ռեֆօրմների սկսված շարժումը։

Լրագրի պարսկական թղթակցի խօսքով, Աթաբէգ-Ազամին ճանաչող մարդիկ հաւատում էին կամ ասում էին, որ հաւատում են թէ Աթաբէգ-Ազամը անկեղծօրէն հաւատարիմ է սահմանադրութեան։ Աթաբէգ-Ազամը իր պաշտօնը ստանձնեց այն պայմանով, որ հաւատարիմ կը լինի սահմանադրութեան և պատասխանատու պարլամենտի առաջ, և դրա համար նա հանդիսաւոր երդում տուեց մէջլիսում։

Լրագրի թղթակիցը աւելացնում է, որ Աթաբէգ-Ազամը կրկին մեծ-վեզիր դառնալու օրից ոչինչ այնպիսի քայլ չարեց, որ կասկածվէր թէ նա դիտաւորութիւն ունի դաւաճանել սահմանադրութեանը։ Պարլամենտը յայտնեց, որ նրա կորուստը անփոխարինելի է, և սպանութեան նախընթացներին անուանեց պարսիկ ժողովրդի թշնամիներ։

Սակայն յեղափոխականները չէին հաւատում Աթաբէգ-Ազամի հաւատարմութեանը ռեֆօրմների գործին, չը նայելով նրա խոստումին և երդման։ Պարսկական յեղափոխականների էմիսարները ի կատար ածեցին դատավճիռը «ռուս յեղափոխականների» կատարեալ սառնասիրտ ֆանատիկոսութեամբ, որոնց շրջանում նրանք ապրում էին։ Գաղտնի ընկերութիւնների գործունէութեան կենտրոնը, որը իսկական պատճառն էր ի նպաստ ռեֆօրմների սկսված շարժման հիւսիս-արևելեան Պարսկաստանում, գտնվում է ռուսաց սահմանի երկարութեամբ։

Լրագրի խօսքով, անկարելի է նախագուշակել կատարած յանցանքի հետևանքները։ Բարեբաղդաբար թէ Պարսկաստանի և թէ մնացած աշխարհի համար, յանցանքը կատարվեց մի այնպիսի ժամանակ, երբ նրա հետևանքները հազիւ թէ վտանգեն արտաքին բարդութիւններից։

Եթէ այդ սպանութիւնը կատարվէր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Պարսկաստանը սուր դիպլօմատիական կռուի ասպարէզ էր Ռուսաստանի և մեր միջև,—ասում է «Times»,—նա անխուսափելի կերպով լարված յարաբերութիւններ կը ստեղծէր երկու պետութիւնների միջև։

Բոլոր կուսակցութիւնները Պարսկաստանում տարիներ շարունակ ընտելացել են նայելու եւրօպական երկու պետութիւնների մրցման վրա, որպէս տիրապետող ֆակտօր նրանց քաղաքական հաշիւների վրա։ Բայց բարդութիւնների վտանգի, որ պայմանաւորվում է Պարսկաստանի ներքին դրութեամբ, մենք յոյս ունենք, որ առաջն առնված է համաձայնութեամբ։ Երկու պետութիւններն ևս, անկասկած, կաշխատեն միասին, որպէսզի շփոթութիւններից և բռնութիւններից ազատ պահեն Պարսկաստանում այժմ տիրող անցողական դժուար շրջանը։ Ներկայ դրութիւնը չափազանց երկիւղալի է և կարող է ուզած րօպէին շատ ծանր դառնալ։ Կարող են պահանջվել Մեծ-Բրիտանիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների ամբողջ հմտութիւնը և հնկողութիւնը այն դժբաղդութիւնների առաջն առնելու համար, որոնք կարող են լուրջ վնաս հասցնել երկու պետութիւնների շահերին ևս։

«Temps» լրագիրն ասում է, որ Պարսկաստանի առաջին մինիստրի սպանութիւնը զուգադիպում է երկրի պատմութեան կրիտիքական վայրկեանին։ Գանձարանը համարեա դատարկ է։ Շահը մինչև անգամ բաւական փող չունէր ամառը սովորապէս ամառանոց գնալու համար դէպի հիւսիս։ Հարկերը շատ անկանոն են ստացվում։ Միակ որոշ եկամուտն է մաքսահարկը։ Այդ եկամուտը շատ մեծ չէ և համարեա ամբողջապէս գնում է ռուսական փոխառութեան և արտասահմանեան պաշտօնեաների ռոճիկը տալու վրա։

Շատերը կարծում են որ, ձմեռը հասնելուն պէս, երբ դաշտային աշխատանքի վերջանալը և աղքատութիւնը դուրս կը շպրտեն փողոց հազարաւոր թափառականներին և թշուառներին—կը սկսվի սարսափելի ճգնաժամ։ Գործերի այդպիսի դրութեան ժամանակ իշխանութեան գլուխ կանգնած փորձառու և տաղանդաւոր մարդը հանգստացնող կերպով էր գործում։

Ֆրանսիական օրգանը կարծում է, որ այդպիսի հանգամանքներում պէտք է կրկնակի ուրախանալ անգլօ-ռուսական համաձայնութիւն կայանալու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ներքին

24 սեպտեմբերի

ՏՈԲՕԼՍԿ։ Սեպտեմբերի 22-ին Կուտարբիտկա գիւղում աքսորականների խումբը, որ Տիւմէնից դիմում էր Տօբօլսկ, յարձակվեց պահակների վրա։ Աքսորականներից երկուսը սպանվեցին, 6 պահակներ վիրաւորվեցին, որոնցից մէկը վտանգաւոր կերպով։ 11 աքսորականներ փախան կորզելով 7 հրացան։

ԿԻԵՎ։ Հրէուհի Օրուխօսկի բնակարանում ոստիկանութիւնը գտաւ սօցիալ-յեղափոխականների դրամահանգանակիչ անդորրատետրեր, կեղծ անցաթուղթեր և 550 թռուցիկներ։

ԻՎԱՆՕՎՕ-ՎՕԶՆԵՍԷՆՍԿ։ Ոստիկանութիւնը գտաւ մի գաղտնի բնակարան։

25 սեպտեմբերի

ՕԴԵՍՍԱ։ Երէկ քաղաքում տեղի ունեցան մասնակի յարձակումներ անցորդների վրա։

Արտաքին

24 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ։ Անդրիում նախկին մինիստր Գօբլէի արձանը բանալու ժամանակ, Կլէմանսօ ի միջի այլոց ասաց, որ նա դատապարտում է դասակարգային կռուի հրաւիրողներին և առաջարկում է արհամարհանքով վերաբերվել պետական յեղաշրջման կողմնակիցների դիմումներին։ Նա հրաւիրում է բոլոր բանւորներին միանալ սօցիալական համերաշխութիւնը պահպանելու համար։ Գօբլէն առաջինը ամօթալի սիւնին բևեռեց այն ֆրանսիացիներին, որոնք օտարազգի պետութիւնների օգնութեամբ պատրաստ էին թուլացնել հայրենիքը։

Օրանի քաղաքապետը հաղորդում է, որ քաղաքում երևացել են ժանտախտի երկու դէպքեր։

25 սեպտեմբերի

ԼԻԶԲԵՆ։ Բազմամարդ ժողովում մինիստր Բրիանը ճառ արտասանեց, որով ի միջի այլոց մատնանշեց, որ կառավարութիւնը կը կատարէ իր խոստումները և կը գործադրէ առաջարկած բարենորոգումները, և յոյս յայտնեց, որ բանւոր դասակարգը չի գնալ ծայրայեղ ճանապարհներով և չի մեկուսանալ առ հայրենիքը տածած սիրուց։

ԲԵՐԼԻՆ։ Էլզաս-Լօտարինգիայի փոխարքայ Գօգէնլօէ Լանգենբուրգը հրաժարական տուեց։ Նրա յաջորդ նշանակված է Վիէննայի գերմ. դեսպան կոմս Բիդէլը։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Սեպտեմբերի 24-ին վերսկսվեցին ռէյխստագի նիստերը։ Ընտրված է պրեզիդիումի նախկին կազմը։

ՎԻԷՆՆԱ։ Րէյխսրատի նիստերը կը վերսկսվեն հոկտեմբերի 3-ից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)

Արագ—առաւ. 6 ժ. 58 ր., Գանձակ—առ. 11 ժ. 44 ր., Եւլախ—ցեր. 1 ժ. 18 ր., Բագու—երեկ. 8 ժ. 3 ր.։ Պօստ.—երեկ. 8 ժ. 34 ր., Գանձակ—գիշ. 2 ժ. 55 ր., Եւլախ—առ. 5 ժ. 3 ր., Բագու—ցեր. 2 ժ. 21 ր.։ Մարդատար—առ. 9 ժ. 3 ր., Գանձակ—ցեր. 3 ժ. 20 ր., Եւլախ—ցեր. 5 ժ. 23 ր., Բագու—գիշ. 1 ժ. 53 ր.։

ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվօ, Ռիօն)։

Արագ—երեկ. 11 ժ. 58 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 52 ր., Միխայլօվօ—գիշ. 2 ժ. 56 ր., Ռիօն—առ. 6 ժ. 42 ր., Բաթում—առ. 10 ժ. 17 ր., պօստ.—ցեր. 1. ժ. 21 ր., Գօրի—3 ժ. 53 ր., Միխայլօվօ—ցեր. 5 ժ. 24 ր., Ռիօն—երեկ. 9 ժ. 48 ր., Բաթում—գիշ. 2 ժ. 39 ր., Մարդ.—գիշ. 1 ժ. 3 ր., Գօրի—առաւ. 3 ժ. 35 ր., Միխայլօվօ—առ. 5 ժ. 17 ր., Ռիօն—առ. 9 ժ. 40 ր., Բաթում—ցեր. 2 ժ. 21 ր.։

ԲՕՐԺՕՄ—ցեր. 3 ժ. 8 ր., առ 9 ժ. 48 ր.։

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ)։

Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 51 ր., Երևան—երեկ. 7 ժ. 21 ր.։ Մարդ.-ապր.—ցեր. 1 ժ. 43 ր., Ալէքսանդրօպօլ—երեկ. 12 ժ. 45 ր., Երևան—գիշ. 6 ր. 51 ր.։

ԹԻՖԼԻՍ

ԲԱԳՈՒԻՑ—արագ.—երեկ. 11 ժ. 33 ր., պօստ.—ցեր. 12 ժ. 31 ր.։ Մարդատար—երեկ. 12 ժ. 33 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ—արագ—գիշ. 6 ժ. 38 ր., պօստ.—երեկ. 7 ժ. 43 ր., մարդ.—առ. 8 ժ. 23 ր.։

ԲՕՐԺՕՄԻՑ—գիշ. 6 ժ. 8 ր., ցեր. 10 ժ. 2 ր.։

ԵՐԵՒԱՆԻՑ—պօստ. գիշ. 5 ժ. 58 ր., Մարդ.-ապրանք.—ցեր. 5 ժ. 13 ր.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս), միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Մի ծեր կին ունի մի 45 տարեկան հիւանդ տղայ. շատ նեղ դրութեան մէջ է և խնդրում է բարերարներին օգնել իրան։ Հասցէն՝ Песковская ул., д. Грехничева № 20. (չ. ու.) 1—2

Լոյս տեսաւ
Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆԻ
„ՔՆԱՐ“
երգարանը (եւրօպական նոտաներով)։ «ՔՆԱՐ»-ը բաղկացած է 106 եր., մեծ մասը ժողովրդական երգերից. գինն է 1 ր.։ Դիմել՝ Баку, Армянская школа, Гимназичекая ул., Степану Демурянцу.
(օ. մ.) 1—30

Մի ինտելիգենտ ընտանիք
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՆԱԽԼԷԲՆԻԿՆԵՐ
կարելի է դասերի կրկնողութեամբ։ Պատրաստում է երկսեռ աշակերտներին բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն կամ Уголъ Екатерининской и Панасевича ул. № 3. кв. Есаянцъ, близъ коммерчесскаго училища.
(ա. օ.) 2—5

ՕՐ. ՎԱՐԴՈՒՀԻ
ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ և ՁԵՌԱԳՈՐԾԻ ուսումնարանի աշակերտուհիների ընդունելութիւնը կը սկսվի սեպտեմբերի 25-ից, իսկ պարապմունքները և պատուէրների ընդունելութիւնը կը լինի հոկտեմբերի 4-ից. Գանձակ, Գօլիցինսկայա փողոց, սեփական տուն։ (չ. ու.) 2—2

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
Վերայում, «Սալխնօյի» և մօլօկանների թաղի մէջ տեղում, Մակարօֆների սեփականութիւն կազմող հողերը, որոնք շատ յարմարագոյն են շինութիւնների համար։ Նոյնպէս և՝ «Սաբուրթալօյում», խճուղու ճանապարհին կից, Մուշտայիդի դիմաց։ Հողաբաժինների տարածութիւնն է 100-ից մինչև 120 քառ. սաժէն։ Արժէքի վճարը լինելու է ամսէ-ամիս, 6 ամսվայ ժամանակով, սկսած սեպտեմբերի 1-ից։ Արժէքի ընդհանուր գումարը վճարելուց յետոյ գնողները կատարեալ իրաւունք են համարում իրանց հողաբաժինները օրինական ճանապարհով հաստատել տալու իրանց վրա՝ ստանալով կուպչիաները։ Ցանկացողները դիմում են. «Ախալցէն» գրասենեակը, Դվօրցօվայա փողոց, վրաց ազնուականների տուն, և Ալէքսանդր Գաբայեվի գրասենեակը, Վերայի փայտի հրապարակում, ուր առաջ քաղաքային մսավաճառանոցն էր։ Յիշված տեղերում կարելի է տեղեկանալ վաճառվող հողերի քառակուսի սաժէնների արժէքի մասին՝ իւրաքանչիւր հողաբաժիններինը առանձին-առանձին։
Կօմմիսիայի անդամներ՝ Սեվաստի Գանչեչիլաձէ, Բագրատ Թորոսեանց, Իսակ Բախտաձէ։ (օ. մ.) 4—10

Լոյս են տեսել
Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ
փոխադրած հետևեալ դասագրքերը
Իւբևիչից՝ Թուաբանական օրինակներ և խնդիրներ. Ա. տարի 15 կոպ.
Բ. տարի 25 »
Գ. տարի 25 »
Շապօշնիկօվից և Վալցօվից՝ Թուաբանական օրինակներ և խնդիրներ. կոտորակների տեսութիւն և ընդհանուր կանոններ, Ա մաս 30 կոպ.։
Իւբևիչից՝ Համառօտ երկրաչափութիւն, I մաս, գինը 25 կոպ.։
Իւբևիչից մեր փոխադրած թուաբանական առաջին երեք դասագրքերը Կովկասեան ուսումնարանական շրջանի Հոգաբարձական Խորհրդի կողմից ընդունված են իբրև յարմար ձեռնարկներ պետական տարրական դպրոցներում գործածելու համար։
Գլխաւոր պահեստը Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութում։
(չ.) 4—6

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Մողնու եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը այսու յայտնում է, որ Գայիանեան դպրոցի 1-ին պատրաստական դասարանում աշակերտուհիների ընդունելութիւնը փակված է։ (չ.) 1—1

Տրիպպերը երկու օրում,
իսկ հնացածը ՄԻ ՔԱՆԻ ՕՐՈՒՄ, բժշկվում է առանց բացառութեան նոր գտած միջոցով «ՊԵՐԼՕԻԴԻՆ»-ով։ Ծախվում է Վ. Դիննանտի մօտ. С.-Петербургъ, Невскій, 53. Ուղարկվում է հրահանգի հետ միասին 3 րուբլով.
Անհաշիւ քանակութեամբ շնորհակալութիւններ։
(20, 26) 2—2

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ
կարդալ, գրել և խօսել սովորեցնում են 8 ամսում տեսական և գործնական զբաղմունքների միջոցով. ամսական 5 ր.։ Ընդունելութիւնն ամեն օր 10—12 և 4—7 ժ.։
Միքայէլեան պրօսպ., տուն № 24/4
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութ. կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
8—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՅՈՎՀ. ՁԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
(Կառավարչական ուսումնարանների իրաւունքներով)
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձերի համար, կուրսը 50 րուբլի։ Կուկիա I. Թումանօվսկի փողոց սեփական տ. № 13. 2—4

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми
Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.